№ 57 ՇԱԲԱԹ ՄԱՅԻՍԻ 18 **1896** ՇԱԲԱԹ ՄԱՅԻՍԻ 18 № 57

ՔՍԱՆՉՈՐՍԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Տարեկան գինը 10 ռուբլի, կէս տարվանը 6 ռուբ.
Առանձին համարները 7 կոպէկով.
Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.
Մեր հասցէն. Тифлисъ. Редакція «Мшакъ».
Կամ Tiflis. Rédaction «Mschak».
Տելեֆոն № 253.

ՄՇԱԿ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերից)
Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.
Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ.
Տելեֆոն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Նատալիա, Բագրատ Միրիմանեանները և Սօֆիա Մատինեանը սրտի ցաւով յայտնում են՝ առաջինը՝ որդու, իսկ վերջինները՝ եղբօր՝ Ռաշա քաղաքում մայիսի 10-ին վախճանված՝

Ղ Ե Ի Ո Ն Դ Ք Ա Հ Ա Ն Ա Յ Մ Ի Ր Ի Մ Ա Ն Ե Ա Ն Յ Ի

մահը։ Հոգեհանդիսաը կը կատարվի կիրակի, մայիսի 19-ին, առաւօտեան ժամը 11½-ին Ջգրաշէնի Աւետաց եկեղեցում։ 1—1

Կիրակի, մայիսի 19-ին, Մողնու Ս. Գէորգ եկեղեցում կը կատարվի հանդուցեալ

Հ Ա Մ Բ Ա Ր Ձ Ո Ւ Մ Մ Կ Ր Տ Չ Ե Ա Ն Է Ն Ֆ Ի Ա Ճ Ե Ա Ն Յ Ի

հոգեհանդիսաը։ Սկիզբը առաւօտեան 11 ժամին։ 1—1

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Վտանգ է սպառնում.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Օրէցօր. Փոխատու խնայողական ընկերութեան նոր կանոնադրութիւնը. Մատենագրութիւն. Նամակներ Մոսկվայից. Նամակ Նուխուց. Նամակ Գանձակից. Նամակ Խմբագրութեան. ՆԵՐՔԻՆ լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Վերջին տեղեկութիւններ. Նամակ Պարսկաստանից. Նամակ Պարսկաստանից. Ազատամիտ լրագրի կարծիքը. Պարսկաստան. Մակեդոնական բէֆորմների ծրագիրը. — ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. ՃՐՀԱԴ.

ՎՏԱՆԳ Է ՍՊԱՌՆՈՒՄ

„ԵԹԷ մենք՝ եւրոպացիներս զիտենայինք, թէ ինչ վտանգաւոր ճանապարհի վրա ենք գտնվում մենք ներկայումս, եթէ մենք հաշիւ տայինք մեզ՝ թէ ինչ մեծ անդունդի առաջ ենք մենք կանգնած, վաղուց դադրած կը լինէին մեր ներքին անհամաձայնութիւնները և մեր սուր կռիւները միմեանց հետ, և մենք ընդհանուր ոյժերով կաշխատէինք մեր ժողովրդական ամբողջութեան շահերը ապահովելու որ և է պատեհականութիւնից։“ Այսպէս է խօսում ֆրանսիական աչքի ընկնող զիպլոմատներից մէկը, դ'Էստուրնել դէ կոնստան, մատնանիշ անելով այն փաստի վրա, թէ ինչպէս եւրոպացին, դիզելով հարստութիւնը անկիրթ և սակաւաթիւ երկիրների հաշուով և ընտելանալով կեանքի յայտնի ճոխութեան, կամաց կամաց յետ է քշվում արդիւնաբերութեան ասպարէզից։

Մի ժամանակ Ամերիկան մի վայրենի երկիր էր, որտեղ եւրոպայի կապիտալը հարստութիւն էր ժողովում՝ եւրոպացիների համար։ Բայց յետոյ Ամերիկան սկսեց ինքնուրոյն կերպով զարգանալ, իր հարստութեան տէրը դառնալ և նոյն իսկ մրցում սկսել եւրոպացիների հետ։ Ոչ միայն Միացեալ Նահանգները, այլ և Հարաւային Ամերիկայի պետութիւնները ուժեղացել են տնտեսապէս և միջազգային վաճառականում ձեռք են բերել պատկառելի տեղ։ Մինչև իսկ այնպիսի երկիրներ, ինչպէս Աֆրիկան, Ասիան և կղզիները և հին կուլտուրայի աշխարհներ, ինչպէս Հնդկաստանը և Եգիպտոսը, օրից օր աւելի ու աւելի մեծ տեղ են գրաւում համաշխարհային արդիւնաբերութեան մէջ և սպառնում են յետ մղել եւրոպական ապրանքները։

Եւրոպան այժմ ապրում է մեծ մասամբ օտար հացով, ստանում է իր գործարանների նիւթերը՝ բամբակը, բուրդը, վուշը, շերամը ուրիշ երկիրներից։ Բայց դրանից վերջին ժամանակներս նկատվում է, որ հեռաւոր երկիրներում սկսում են նոյն իսկ գործարաններ բանալ և հում նիւթերը մշակել բուն երկրում, առանց արտահանելու Եւրոպա և այդպիսով Եւրոպայի կատարած դերը ստանձնում են իրանք, ազատվելով արտաքին խնամակալութիւնից։

Իսկ եւրոպացիները զինված են մշտական պատերազմական պատրաստութիւններով, և յարմար րոպէին են սպասում միմեանց վրա յարձակվելու, միմեանցից երկիրներ խլելու, տուգանքներ պահանջելու։ Բանը այնտեղ կը հասնի, որ ուժեղ, հարուստ Եւրոպան մի օր կը տեսնի, թէ ինչպէս հարստութեան աղբիւրները նրա ձեռքից դուրս են եկել և եւրոպական աշխատաւոր մեծամասնութիւնը զրկված է գործից։ Այժմ իսկ երբ Անգլիայում ածխահանքի աշխատաւորները գործադուլ են անում, Եգիպտիան է ուղարկում քարածուխը Անգլիա։ Իսկ եթէ յանկարծ մի այնպիսի մեծ և աւերիչ պատերազմ սկսվի, որ միլիոնաւոր մշակներ ստիպված լինեն պարապ մնալ կամ պատերազմի դաշտերում միմեանց կոտորել, այն ժամանակ եւրոպական արդիւնաբերութիւնը կարող է կանգ առնել, որով կը բացվի ազատ և լայն ճանապարհ Եւրոպայի հետ մրցողների համար։

Եւրոպան պէտք է ձեռք վերցնի անմիտ և աննպատակ ձեռնարկութիւններից և իր բոլոր ուշադրութիւնը դարձնի իր աշխատաւոր մեծամասնութեան և արդիւնաբերող ազգաբնակութեան վրա, աշխատելով ամրացնել նրա տնտեսական զարգացման գործը և այդպիսով ապահովել նրա բարոյական անընդհատ առաջադիմութիւնը։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՕՐԷՑՕՐ

XXV

«Էրմիտաժի» գեղեցիկ դահլիճներում, ուր շամպայնը հոսում էր նոյնքան առատ, որքան տաքացած հռետորների ճառերը, մամուլի և գրականութեան բազմաթիւ ներկայացուցիչները մայիսի 12-ին հրաշալի, անմոռաց ոգեորութեան և ոճի տեսակէտից օրինակելի ճառեր արտասանեցին,—խօսեցին մամուլի ահագին նշանակութեան, տպագրական խօսքի մեծութեան, ճշմարտութեան, մաքրութեան, աղնութեան, փոխադարձ սիրոյ, համերաշխութեան, գրականութեան և մամուլի բարգաւաճման մասին։ Խօսեցին և տաքագլուխ ֆրանսիացիները, և սառն գերմանացիները, և հիւրասէր ռուսները։ և խօսեց ով ախորժակ ունէր, ով կամենում էր ծափահարութիւն ստանալ, ով, վերջապէս, ընդունակ էր ներշնչվել ընդհանուր ոգեորութեամբ...

Բայց հետանքը։

Հետանքը մեծ է, հաւատացնում է մեզ Ռուսաց գործակալութեան հեռագիրը, այն գործակալութեան, որի դիրեկտորները՝ Կոմարով, Սուվորին բաւական վարժվել են «յանուն մամուլի» իրանց համար բեկլամներ անել, և «գաղափարի» անուան տակ մինչև անգամ փող վաստակել (ապացոյց գործակալութեան վերջին պահանջը)։ Բայց, արդեօք, իրաւունք ունենք հաւատալ այդ խօսքերին, իրաւունք ունենք հաւատալ ոգեորված ճառերին և մեծ-մեծ ֆրազներին, որոնք արտասանվեցին և արտասանվում են փառաւոր ճաշկերոյթների ժամանակ։

Մեր ֆրանսիացի հիւրերը ամենից շատ խօսեցին մամուլի բարձր, սրբազան նշանակութեան մասին։ Բայց ինչ դրութեան են հասցրել այդ նոյն ֆրանսիացիք մամուլն իրանց հայրենիքում.—նրանք դարձրել են գրիչը և տպագրական խօսքը չանտաժի, րէկլամի, վաճառքի նիւթ, հասցնելով ֆրանսիական մամուլը իր անկման վերջին ծայրին։ Եւ այն մարդիկ, որոնք ոգեորված պատասխանում էին յաւիտենական պարիզցիներին, իրանք դուցէ նոյնպէս ոչ պակաս նը-պաստել են մամուլի բարոյական քայքայման, թէև այսօր աշխատում են այդ քայքայումը վարագուրել գեղեցիկ ճառերով...

Ինչ օգուտ մամուլին, գրականութեանը այդ գեղեցիկ ճառերից, քանի որ այդ ճառերը, «փոխադարձ չիման» անունով կազմած բանկէտները դարձել է մի նոր միջոց՝ աւելի ևս վարագուրելու այն չահասիրական, ամեն մի ճշմարտութիւն խեղդող ձգտումը, որ ամեն օր, ամեն քայլափոխում հանդէս է գալիս մամուլի մէջ, թէ մեզ մօտ և թէ այն երկրներից չատերում, որտեղից եկել էին ոգեորվող ճառախօսները։

Գեղեցիկ ճաշկերոյթների ժամանակ, շամպանիա զինու ազդեցութեան տակ ոգեորվել, նոյն իսկ արտասվել կարող է ով և ասէք, բայց այդ ճառերին և ոգեորութեան հաւատա-

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՃՐՀԱԴ

Մենք հայերս միշտ տրտնջում ենք, թէ մեր դրացի միլլիները, այսինքն մահմետականները ամեն օր և ամեն վայրկեան մեզ հետ յարաբերութիւններ ունեն, ամեն րոպէ իրանց կեանքը մեր կեանքի հետ շփվում է, և այնու ամենայնիւ մնում են կղզիացած ու վարում են իրանց համար բոլորովին զատ կեանք, մեզ չեն հասկանում և հասկանալ էլ չեն ուզում։ Մենք զարմանում ենք, թէ ինչու համար մեր երկրակից մահմետականները այնչափ խրտնում են ուսումից և լուսաւորութիւնից. մենք շատ ափսոսում ենք, որ դրանք կաշկանդված իրանց կրօնական և աւանդական նախապաշարմունքներով վնասում են ոչ միայն իրանց և իրանց որդոցը, այլ և մեզ. որովհետև եթէ դրանք հասկանային եւրոպական և քրիստոնէական գիտութիւնների և կրթութեան արժէքը, հասկանային իրանց տըխուր կիսաբարբարոսական արտաքին և ներքին վիճակը, որչափ կօգտվէինք մենք և իրանք, ինչ ընդհանուր ձեռնարկութիւններ, ընկերութիւններ, հիւանդանոցներ, դրադարաններ, գործարաններ, ճանապարհներ և այլն և այլն չէինք ունենայ։ Եւ մեր այս բոլոր գանգատները ճըշմարիտ են և արդար։

Բայց չէ՞ որ մենք հայերս էլ նոյն սխալն ենք գործում մեր մահմետական դրացիների վերաբերմամբ։ Քանի հայ կը գտնվի ամբողջ Կովկասում, որ կարողանար թուրքերէնը մի փոքր կանոնաւոր խօսել, ուր մնաց կարդալ կամ մանաւանդ գրել։ Մեզանից քանի՞ հայ կայ, որ մահմետական կրօնքը ճանաչէր, ծանօթ լինէր այդ կրօնքի սկզբնաւորութեան և տարածման հետ, գիտենար Ղուրանը արաբերէն լեզուով, իմանար շիայութեան և սիւննիութեան տարբերութիւնը, իմանար զըրանց տարբեր-տարբեր աստուածաբանական ուղղութիւնը՝ հանաֆի, մալիքի, շաֆէի, հանբալի և այլն. գիտենար հադիսը, զիասը, ֆըթվան, ֆըզհը և այլն։ Ամեն տարի տեսնում ենք շախսեյը, առանց իմանալու, թէ ինչ է այդ սարսուռ բերող տեսարանի պատճառը, թէ ով է եղել Հասանը և Հիւսէյնը, ով է Եզիդը, Միւավեան, Շըմրը, չը գիտենք։ Աբուբէքրը, Օմարը, Օսմանը, Ալին, Այշան, Ֆաթման ովքեր են. Մէքքան, Մեդինան, Քէրբէլան և Մէշհէդը ինչ նշանակութիւն ունեն մեր դրացիների համար, որ միշտ քաշում են իրանց մօտ,—որ հայը գիտէ։

Սակայն հէնց այդ բաներն են, որոնց վրա հիմնված է մահմետականի կեանքը, հասկացողութիւնը, իդէաներն ու իդէալները։ Եւ մենք երեխայաբար սպասում ենք, որ նա մի կարճ ժամանակում, միայն մեր դպրոցներն ու կամ կարասիքը, գրքերն ու լրագիրները տեսնելով յաւիտենակվի ու եւրոպական լուսաւորութիւնով զմայլվի։ Եթէ մենք՝ հայերս, ուզում ենք մեր դրացի մահմետականների վրա ազդեցութիւն ունենալ, պէտք է որ մենք ինքներս առաջ ճանաչենք նրանց հոգեբանական և մտաւոր կեանքը, նրանց դաղափարները, միտքը, համոզումները և հայեացքները, և այնուհետև սովորեցնենք նրանց մեր աւելի լուսաւոր տեսութիւնները։ Այն էլ պէտք է խոստովանենք, որ մենք այն բոլոր օգուտը դեռ չենք քաղել մահմետականութիւնից, որ իբր հում նիւթ սպասում է հայ ձեռքերի։ «Թովզաթ-ուլ-սաֆա» կոչված մեծ պատմական գրքի մէջ հայերի մասին շատ նիւթ կայ, որ միայն այդ գրքից կարելի է իմանալ։ «Թարիխը դաճարեյյէ» պարունակում է նոյնպէս շատ նիւթ մեր վերջին անցքերի մասին։ «Թարիխը վաղդի» մի հին արաբերէն ժամանակակից պատմութիւն է, որ մանրամասն ներկայացնում է Հայաստանի նուաճումը արաբների ձեռքով։ Եւ բացի դրանից մինչև այսօր էլ չուարված և շշկլված չենք հասկանում, թէ ինչու համար թիւրքերը այսպէս յանկարծ թափվեցան հայերի վրա և կոտորեցին ու կոտորում են։ Եթէ մենք լաւ ծանօթ լինէինք նրանց սկզբունքների և կրօնական ու քաղաքական տեսութիւնների հետ, ոչ միայն չէինք չուարվի ու զարմանայ, այլ և գուցէ թիւրքաց հայերը չատ պատուհասներից էլ զերծ մնային։

Նախ և առաջ պէտք է իմանալ, որ մահմետականութիւնը սոսկ կրօնք չէ, այլ քաղաքական կրօնք կամ կրօնական քաղաքականութիւն։ Պետութիւն և կրօնք, հաւատք և քաղաքական օրէնքները բոլորովին խառն են մահմետականութեան մէջ և անբաժանելի կերպով կապված են իրար հետ։ Հայաստանում պատահած վերջին արիւնհեղութիւնները և թիւրքը կառավարութեան բոլոր արարքները հասկանալու համար, պէտք է դիմել նրանց կրօնա-քաղաքական վարդապետութեանը, և իսկոյն կը բացատրվի ամեն բան։ Մահմետականութիւնը ունի իր որոշ և զարերով հաստատված օրէնքները, որոնց վրա հիմնված է նրանց կրօնական ու քաղաքական կեանքը բոլոր իր ճիւղերով, և այդ օրէնքները աւանդվում են բարձրագոյն դպրոցներում սերունդից սերունդ միանման կերպով և անփոփոխ, թէև կան այլ և այլ հեղինակներից յօրինված զանազան ձեռնարկներ։ Ամենից երեւելի կրօնա-իրաւաբանական դասագիրքը, որ Թիւրքիայում ուսուցանվում է և գործադրվում, «Աշխարհի իմաստունների թագաւորը Ուբէյդուլլահ իբն-Մասուդ իբն-Թաճ-ուշ-շարիաթի» Վըգայիա կոչված գիրքն է իր 140 գլուխներով։ Այդ գրքում մի ամբողջ զը-

րիմ մնալ ճաչկերոյթից յետոյ էլ, գրական գործունէութեան ծանր, մաշող բօղէներին ևս,— ահա թէ ինչ է պահանջում մամուլն իր գործողներից, իր անունով ճառեր խօսողներից։

Թ. Մալումեան

ՓՈԽԱՏՈՒ ԽՆԱՅՈՂԱԿԱՆ ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՆՈՐ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹԻՒՆԸ

Մի ժամանակ մամուլը շատ էր զբաղվում փոխատու-խնայողական ընկերակցութիւնների հարցով։ Ամենքը յոյս ունէին այդ միջոցով ազատել գիւղացուն վաշխառուներից, տալով նրա ձեռքը էժան և ճեռնտու պայմաններով փող։ Սակայն փորձը արդարացրեց եղած յոյսերի միայն մի մասը։ Գիւղացիները հասկացան փոխատու խնայողական ընկերակցութիւնների գաղափարը, բայց նրան գործադրելու համար անընդունակ հանդիսացան՝ մասամբ արտաքին պայմանների ազդեցութեան տակ, մասամբ իրանց սեփական պակասութիւնների պատճառով։ Ընկերակցութիւնները մի քանի տեղերում փոխանակ գիւրութիւններ տալու գիւղացուն, գցեցին նրան պարքերի մէջ, որոնցից նա անկարող է ազատվել տարիների ընթացքում։ Ընկերակցութիւնները ունեցան կատարեալ աջողութիւն այն տեղերում, ուր գործավարները բարեխիղճ և եռանդուն անձինք էին, ուր գիւղացիները իրանք խնայող և հաշող մարդիկ էին և վերջապէս, ուր տեղական իշխանութիւնը համակրութեամբ էր վերաբերվում այդ հաստատութիւններին և իր կողմից նպաստում էր, որ գիւղացիները ճշդութեամբ կատարեն իրանց պարտաւորութիւնները։

Տարիների փորձից համոզվեցին, որ այդ ընկերակցութիւնները օգտաւէտ դարձնելու համար, անհրաժեշտ է, որ նրանք իրանց վրա վերցնեն և մի քանի ուրիշ գործեր, որոնք կապ ունեն գիւղական ժողովրդի կենսական պահանջների հետ, այն է մատակարարեն գիւղական անտեսութեան վերաբերեալ գործիքներ և մթերքներ։

Այս օրերս հրատարակվեց փոխատու խնայողական ընկերակցութիւնների նոր կանոնադրութիւնը, որի մէջ մտել են բարեփոխութիւններ և լրացուցիչ կէտեր։ Նոր կանոնադրութեամբ ընկերակցութիւններին թոյլ է տրվում միջնորդ լինել՝ գնելու կենսական մթերքներ և վաճառելու գիւղական արդիւնագործութեան առարկաները, հիմնել պահեստներ զանազան նիւթեր պահելու և յայտնի պայմաններով վաճառելու, օգնել անդամների ընտանիքներին դժբաղդութեան դէպքերում։ Ընկերակցութեան անդամավճարը պէտք է լինի ոչ աւելի քան 100 ռուբլի և ոչ պակաս քան 5 ռուբլի։ Փոխառութիւն ստանալու համար գրաւ ընդունվում են տոկոսաբեր թղթեր, գիւղատնտեսական արդիւնքներ, արհեստաւորների շինուածքներ և գործիքներ, արհեստանոցներ և տներ։ Փոխառութիւնը տրվում է կարճ ժամանակեայ—ոչ աւելի, քան մի տարով և երկար ժամանակեայ—ոչ աւելի, քան հինգ տարով։

Նոր կանոնադրութեամբ, եթէ փոխառութեան պարտքը ժամանակին չէ հատուցվում, պէտք է պահանջվի խստութեամբ և պէտք է ընկերակցութեան վարչութեան օգնեն այդ գործում ոստիկանութիւնը և գիւղական վարչութիւնը։ Գրաւ դրած կալուածքը, անաջող անուղղից յետոյ, դառնում է ընկերակցութեան սեփականութիւն, և պէտք է ծախվի կէս տարվայ ընթացքում։ Այս վերջին կէտերը ըստ երևոյթին խիստ են երևում. բայց փորձը ցոյց է տալիս, որ միայն դրական ճշդապահութեան միջոցով կարելի է ապահովել փոխատու խնայողական ընկերակցութիւնների աջողութիւնը։

Ն—ն

ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆ

«Լօռեցի Սաքօն»—պօէմա Յովհաննէս Թումանեանցի։ Թիֆլիս, 1896։

Պաթալոգիական զգացումների, չինծու, անհիմն և անհասկանալի վշտի երգիչների մէջ, որոնք մեր գրականութեան մէջ, դժբախտաբար, բաւական շատ են, պ. Թումանեանց ցոյց է տուել, որ կայ ոգեորութեան մի այլ աշխարհ, ուր ճշմարիտ, առողջարար ներշնչումն պատճառում է հայրենի բնութիւնը, ժողովուրդը իր առանձնութիւններով և հասկացողութիւններով։ Նա շատ է երգել Լօռու սարերը և նրանց «ժժգահա հովիւներին»։ Եւ երգել է լաւ։ Նրա ոտանաւորների մէջ շատ աջողվածները լեռների նկարագրութիւններն են։ Կարելի է ասել, որ հայրենի լեռնոտ երկիրը և այնտեղ ապրող մարդիկ իրանց չարքաշ կեանքով, իրանց հնադարեան հասկացողութիւններով, նահապետական աղքատութեամբ և լեռնցու համարձակ ու անվախ սրտով կազմում են այն ընտանի միջնավայրը, ուր պ. Թումանեան գտնում է զգացմունքի, ոգեորութեան կայծեր, ուր նրա գրիչը համարձակ է, պատկերացնող։ Կատարեր կան լեռների նկարագրութիւնների մէջ, որոնք կատարելապէս գեղեցիկ են, ներկայացնում են հիացած սրտի սիրուն նուէրները բնութեան առեղ տեսարաններին։

«Լօռեցի Սաքօն» էլ այդ ընտանի աշխարհից է վերցրած։

Բայց որքան և գեղեցիկ լինեն նկարագրութիւնները, չրջանը, որ տալիս է պատկերներ և տեսարաններ, նեղ է և սահմանափակ։ Ռուսի պարոնի պօէմաները սարեցու կեանքից կրում են մի տեսակ միանմանութեան կնիք։ Ապացոյցի համար բաւական է «Լօռեցի Սաքօի» կողքին դնել նոյն հեղինակի «Անուշ» պօէման։ «Իգիթ» հովիւներ, նրանց ընակարանները, սարերի ու ժայռերի անաւոր տեսքը ցերեկով կամ գիշերը, Դերեզ գետը, հովուական պարն ու չոնն,— սրանք կրկնութիւնների նմանութիւն բերող հանգամանքներ են, որոնք տալիս են պատկերներին ընդհանուր ֆոն, գոյներին, պատմութեան չափին ու ձևին—միատեսակ դրոշմ։ Այնպէս որ կարծում էք թէ «Լօռեցի Սաքօն» մի բեկոր է «Անուշ» պօէմայից։

Այս երևոյթը, որ կարող է պ. Թումանեանցի տնորհքի առաջ խոչընդոտներ յարուցանել և դժուարացնել նրա զարգացումը, մենք բացատրում ենք նրանով, որ պարոնը իր ամբողջ ուշադրութիւնը նուիրում է նկարագրութիւններին և շատ քիչ է մտածում բովանդակութիւն ստեղծագործելու մասին։ Նկարագրութիւնները այն թանգագին նիւթերն են, որոնցից կազմվում են գեղարուեստական ամբողջութիւններ։ Բայց երբ հարուստ նիւթերի համար կայ մի փոքրիկ, աղքատիկ չինութիւն, այն ժամանակ դուք ներկայ էք լինում ապարդիւն կուտակումների, որոնք երկարատև տպաւորութիւն գործել չեն կարող։

Պօէմայի միտքը հետևեալն է։ Լօռեցի հովիւ Սաքօն մի գիշեր մենակ է մնում մի ձորում և, մտաբերելով պառաւական զրոյցները դևերի և չար ոգիների մասին, յանկարծ երևակայում է, որ դրանք մտել են իր փարախը և փախչում է, սար ու ձոր ընկնում, խելագարվում։

Բանաստեղծը տուել է իր հերոսին հերակլեան քաջութիւն և անվախութիւն։ Նա հաստատում է որ

«Գող, գայլ ու գազան, ողջ լեղապատառ
Հէնց գատարկ վախից
Հեռու են փախչում նորա փարախից։»

Եթէ չը լինէին այս յատկութիւնները, եթէ Սաքօն լինէր մի խեղճ հովիւ, այն ժամանակ հասկանալի կը դառնար, որ նա, մենակ մնալով, իր միտքը դարձրել է դէպի քաջքերի աշխարհը և սեփական վախկոտութիւնից փախչում է, գըժվում։ Պատկերը բնական կը լինէր։ Բայց հսկայական հոգին ճնշելու համար հարկաւոր է հսկայական աղէտ։ Սաքօն մի ակնթարթում չը պիտի ընկնէր ահ ու դողի մէջ. սարսափելի ճգնաժամին «ժժգահան» փախչելու մասին չէ մտածում, այլ կռուի, մրցութեան մասին։ Այդտեղ ահա կը բացվէր բանաստեղծի համար ստեղծագործելու շրջան. քաջութիւնը ոչ միայն լոկ նըկարագրական կը լինէր, այլ կարտայայտվէր պատկերների մէջ. Սաքօն կը դառնար որոշ, ամբողջ մի մարմին։ Ի՞նչ միտք ունի այն անազին քաջութիւնը, երբ

«Ինչպէս գիշերը երկնում սնագնած,
Փայլատակում է կայծակը յանկարծ,
Այնպէս մի կըրակ աչքերն առաւ
Եւ իգիթ Սաքօն փարախից թռաւ։»

Եւ թռաւ սար ու ձոր ընկնելու, անաբեկ, յուսահատ վազվզելու և գժվելու համար։

Հասկանալի է, որ այստեղ գործում է նախապաշարված մարդու սարսափը։ Բայց որպէս զի բոլորովին պարզվէր Սաքօն այդ դիրքում, մենք քիչ էլ նրա հոգու հետ պիտի գործ ունենայինք։ Դա աննշան բան չէ։ Մի հոգի, որ անպարտելի քաջութեան մէջ երեխայի վախկոտութիւնն ունի մի որ և է դէպքում, պարզված, պատկերացած պիտի լինէր։ Ամենադժուարը հէնց դա է։ Զը կայ դա, և այդ է պատճառը, որ երբ վերջացնում ենք պ. Թումանեանցի պօէմայի ընթերցանութիւնը, մեր յիշողութեան մէջ մնում են միայն նկարագրութիւնները. Սաքօն մի աղօտ ստուերագիծ է, որ տարածված, փռված է դրանց ետևում։

Այս պակասութիւնը մենք մատնացոյց ենք անում, որովհետև պ. Թումանեան, եթէ միայն աշխատէ և բովանդակութեան, հոգու և մտքի մասին, կարող է տալ մեզ գեղեցիկ, կոկ և ախորժելի պատմութիւններ ոտանաւորով։ Ճիշդ է, ոտանաւորը զերծ չէ պակասութիւններից. «Սաքօի» մէջ կան կտորներ (օր. անձրևի նկարագրութեան մի մասը), որոնք պրօզայի են նման. գաւառաբանութիւնները շատ տեղ խճողում են իսկական գրական լեզուով գրած տողերը։ Բայց և այդպէս, պ. Թումանեանին աջողվում է բանաստեղծութիւնը. իսկ լեզուն ախորժելի է, զօրավոր տներ դրատելու համար գործադրվող բարբարոսութիւններ չենք տեսնում։ Պ. Թումանեանցին մնում է չը հեռանալ այն միջնավայրից, որը նրան ոգեորում է, և հարուստ բովանդակութիւն տալ իր տնորհքին։

Լ.

ՆԱՄԱԿՆԵՐ ՄՕՍԿՎԱՅԻՑ
III

Մայիսի 9-ին

Այսօր լայնածաւալ և բազմալեզու Ռուսաստանի, ինչպէս և քաղաքակրթված աշխարհի ուշադրութիւնը կենտրոնացել է Մոսկվայի վրա։ Առաւօտեան ժամի 7-ից բոլոր փողոցներում մի արտակարգ շարժում է նկատվում. խուռն բազմութեան ալիքները թափվում են դէպի փողոցների այն գիծը, որով Ցարի հանդիսաւոր մուտքն է կատարվելու։ Բոլոր խանութները փակ են և աշխատանքները դադարած. թէև հանդիսաւոր մուտքը 2½-ից առաջ չէ լինելու, բայց բոլորն էլ աշխատում են վաղօրօք տեղ բռնել։ Ժամի 12 էր, երբ ես ես դիմում էի քաղաքի գծից դուրս, յաղթական կամարի մօտ շինված տրիբունների մէկը, ուր տեղ ունէի։ Ամբողջ հանդիսաւոր գծի երկու կողմը ծածկված էր մեծ մասամբ հասարակ դասի անթիւ, անհամար բազմութիւնով, որին կամ զցած հատ պարանը կամ ընտրված կամաւորների պահապան շղթան և պօլիցիան արգելում էին դէպի փողոցը խուժել։ Դրանց առջևից, Կրեմլի պատերի մօտից մինչև Պետրոսեան պալատը, մօտ 6 վերստ տարածութեան վրա, ճանապարհի երկու կողմից, չարքով կանգնած էր հետևակ զօրքը։ Բոլոր տրիբունները և պատուհանները բռնված էին ունևոր դասակարգի մարդկանցով։ Հանդիսաւոր գծի վրա արտակարգ շարժում էր նկատվում. կառքերով և հեծած դիմում էին դէպի Պարկ,

---

լուս, որ չորս մասի բաժանված է, որոշում է կրօնական պատերազմը, որ արաբերէն «ՃԸՀԱԴ» է կոչվում։ Դրա հայերէն թարգմանութիւնը, մի քանի բուն իրանց մեկնութիւններով և ծանօթութիւններով հետևեալն է։

Գլուխ 122 «Քիթաբ-ուլ-ՃԸՀԱԴ», այսինքն ՃԸՀԱԴի գիրքը։

Մասն առաջին

«ՃԸՀԱԴԸ», այսինքն կրօնական պատերազմը*) էական պարտք է միւսլիմի համար**), եթէ յարձակվողները անհաւատներն են։ Այդ ժամանակ պէտք է պատերազմի դուրս գան մինչև անդամ կին և տղուկը, առանց մարդուց կամ տիրոջից հրաման ստանալու, բայց երկրորդական պարտք է, երբ պատերազմ սկսողները միւսլիմներն են։ Երբ պատերազմողներ կան, այն ժամանակ պատերազմելու պարտքը մնացածներին ներվում է։ Բայց եթէ չը կան, այն ժամանակ մեղանչում է չը պատերազմողը։ Պարտական չեն պատերազմելու մանուկը, ստրուկը, կինը, կոյրը, անդամալոյծը և անդամահատվածը։»

«Երբ որ մերայիններից մի տեղ կը պաշարեն, պէտք է պաշարվածներին հրաւիրել իսլամանալ։ Եթէ մերժեցին, այն ժամանակ պէտք է հրաւիրել ճիզեայ (հարկ) տալ։ Եթէ ընդունեցին իսլամութիւնը, նրանք կունենան այն իրաւունքները և պարտքերը, որ մենք ունենք. իսկ եթէ մերժեցին թէ իսլամութիւնը, թէ հարկը, այն ժամանակ պէտք է պատերազմել նրանց հետ ամեն կերպով, ինչ որ կարող է նրանց փչացնել. պէտք է կոտորել նրանց ծառերը և ոչնչացնել նրանց արտերը, առանց անիրաւութիւն, խաբէութիւն և խարդախութիւն գործելու, այսինքն չը սպանել պատերազմելու անկարողին (երեխային, կնոջը, կոյրին, անդամալոյծին և այլն), որոնցից բացառութիւն են կազմում թագուհին, կամ պատերազմի մէջ խորհուրդ տուողը, կամ իր ստացուածքով օգնողը, և այն անհաւատ հայրը, որ յարձակվում է իր միւսլիմ որդու վրա։»

«Միւսլիմներին արգելված է իրանց հետ վեր առնել զուրան և կանայք, և պատերազմի գնալ։ Այդ կարելի է միմիայն այն պատերազմում, ուր միւսլիմների յաղթութեան մասին կատարեալ վստահութիւն կայ։»

«Խաղաղութիւն անել, եթէ այդ օգտակար է. հարկը պահանջելու ժամանակ խաղաղութիւն անել և ստացուածքով։ Կարելի է խաղաղութիւնը քանդել, եթէ դա օգտակար է, և խաղաղութիւնը պաշտօնապէս չը քանդած էլ կարելի է նրանց ջարդել, եթէ անհաւատարմութիւն են ցոյց տալիս։

«Միւրթադների հետ ստացուածքով խաղաղութիւն անել չէ կարելի. ու եթէ նրանցից ապրանք է առնված, պէտք չէ ետ տալ։ Նաև չէ կարելի ծախել նրանցից ոչ մէկին ոչ զէնք, ոչ երկաթ և ոչ ձի, թէկուզ խաղաղութիւն էլ հաստատված լինի։»

«Աղատ միւսլիմը կամ միւսլիմուհին կարող է պաշտպանութիւն խոստանալ յաղթվածների այս կամ այն անձին. բայց եթէ այդ պաշտպանութիւնը վնասակար երևայ, պէտք է դրժել և պաշտպանողին յանդիմանել։ Միւսլիմների հպատակ եղող քրիստոնեայի խոստացած պաշտպանութիւնը նշանակութիւն չունի, նոյնպէս և այն պաշտպանութիւնը, որ խոստանայ թշնամու ձեռքը գերի ընկած կամ նրանց մօտ առնտուր անող միւսլիմը, կամ պատերազմի միջոցին իսլամութիւն ընդունողը, որ չէ գնում միւսլիմների մօտ։ Նշանակութիւն չունի նաև երեխայի, իրաւազուրկ տղուկի և խելացնորի տուած պաշտպանութեան խոստումը։»

---

*) Ծանօթ. հեղ. «ՃԸՀԱԴ» նշանակում է պատերազմ անհաւատների և նմանների հետ, որ ասել է՝ նրանց ջարդել, կողոպտել, քանդել նրանց աղօթատեղները, փչրել պատկերները և կուռքերը։ ՃԸՀԱԴի նպատակն է մեր հաւատքը զօրացնել պատերազմելով զինվածների դէմ, մեղ հպատակ քրիստոնեաների դէմ և միւրթադների (կրօնափոխների) դէմ, որ այս յատկինները աւելի չար են, քան քաֆիրները (անհաւատները), որովհետև իսլամութիւնը դաւանելուց յետոյ ուրանում են։

**) Մահմեդական կրօնը երկու տեսակ կրօնական պարտք գիտէ՝ «ֆարզը էյն» և «ֆարզը ֆայէ». առաջինը անհրաժեշտ է, իսկ երկրորդը կամքի ձգված։

Մասն երկրորդ

«Ամեն ինչ որ զօրքի միջոցով յաղթվեց և առնվեց, պէտք է իմամը (իշխանը) բաժանէ զօրքերին, կամ նշանակէ իր մարդիկը նրանց (յաղթվածների) վրա, որ առնեն ճիզեան (անձնահարկը) և խարաճը (հողահարկը)։ Նրանցից առնված գերիներին կարելի է հանդամանքին նայելով կամ սպանել, կամ ստրկացնել, կամ ազատ թողնել, որպէս զի մեր ստրուկ հպատակները լինեն։ Նրանց չէ կարելի առանց տրիտուրի բաց թողնել։ Ընդունելի չէ և նրանց տրված փրկանքը։ Ոչ մի կերպով չէ կարելի նրանց ետ ուղարկել իրանց երկիրը։»

«Արգելված է աւարը բաժանել պատերազմի դաշտում։ Նրանից կարելի է միայն կարօտ զօրքերին ժամանակաւորապէս բան փոխ տալ։ Պատերազմի դաշտում մեզ օգնող անհաւատն էլ բաժին պէտք է ստանայ, ինչպէս զօրք, բայց բաժին չեն ստանայ ոչ մեր վաճառականը, որ չէ պատերազմել, և ոչ էլ պատերազմի դաշտում մեռածը, այլ նրա ժառանգները մի մաս միայն կը ստանան աւարից։ Մենք իրաւունք ունենք պատերազմի դաշտում վայելել աւարից և ուտեցնել մեր ձիերին. կամ գործ ածել ձէթը, փայտը ու պէտք եղած զէնքը։ Այս իրաւունքը դադարում է պատերազմի դաշտը թողնելուց անմիջապէս յետոյ։»

(Կը շարունակվի)

Պետրոսեան պալատը, չքեղ հագուստներով այն մեծամեծները, որոնք ըստ ցերեմոնիալի, պէտք է մասնակցեն հանդիսաւոր մուտքին։

Տաք և պայծառ օր է. մեզնից ձախ և աջ ընկած է Պետերբուրգեան խճուղին, որը, ինչպէս և ամբողջ հանդիսաւոր դիծը, ծածկված է թարմ դեղին աւազով։ Ձախ, յաղթական կամարի մօտ երեւում են այն երկու հսկայական սիւները, որոնց մասին գրել էի անցեալ նամակում, անուանելով դրանց մօնոմախեան կօլօնններ, որովհետև վերջանում են Մօնոմախի թագի ձեւով շինած ոսկեզօծ թագերով։ Այդ կոթողներից կախված են եռագոյն դրօշակներ՝ Թագաւոր Կայսրի և Թագուհի Կայսրուհու անունների առաջին, սաժենանոց սկզբնատառերով։ «Տէր, պահիր Թագաւորին» և «Փառք յաւիտեան, փառք» խօսքերը կն գրված այդ դրօշակների վրա։ Իսկ սիւների վերեւի մասում կարդացվում է. «Եկ խաղաղութեամբ, Ցար, Մօսկվան ցնծում է, տեսնելով Քո մուտքը» և «Ցար, Տէրը զօրացնէ Քո բազուկը»։

Ժամի 2½ է։ Արդէն վաղուց դադարել է Պարկ գնացողների հոսանքը։ Պալատի կողմից լսվեց թնդանօթի ձայն։ Զօրքն ուղղվեց իր տեղում. ժողովրդի մէջ սկսվեց իրարանցում և խուլ աղմուկ։ Բոլորի հայեացքները ուղղված են մի կողմ։ Ահա, հեռուից մօտեցող որոտի նման, սաստկանում է անհամար ժողովրդի «ուրաների» ձայնը. երեւում է հանդիսի սկիզբը։ Ձիաւոր ժանդարմներից յետոյ գալիս է Նորին Կայսերական Մեծութեան թիկնապահ կօզակ զօրքը, կարմիր ոսկեգոյն եզերքով զգեստ հագած, սպառազինված հրացաններով և հեծած հրաշալի նժոյգներ։ Այդ հզօր գնդին հետեւում են Ռուսաստանի հպատակ ասիական ազգերի ներկայացուցիչները, որոնք աչքի են ընկնում թէ իրանց դէմքերով, թէ ոսկեթել խայտաբղէտ խալաթներով, չալմաներով ու փափախներով և թէ երիվարների ոսկեկուռ զարդարանքներով։ Յետոյ նոյնպէս հեծած, կօզակ զօրքերի ներկայացուցիչներն են և ազնուականները։ Շքեղ հեծելախմբերից յետոյ ղոյդ-ղոյդ և իրար ետեւից շարված, հանդիսաւոր ոսկեթել հագուստներով, գալիս են 60 պալատական սպասաւորներ, 4 արագընթացներ, 4 պալատական նեգրներ, 14 պալատական երաժիշտներ, Կայսրի ասպանդակապահը, 26 որսորդներ, որսորդապետը և այլ պալատական սպասաւորներ, բոլորն էլ ոսկեզօծ փառաւոր զգեստներով։ Այնուհետև սկսվում է ոսկեզօծ բաց և ծածկված կառքերի մի շարք՝ լծած վեց-վեց գեղեցիկ ձիերով, որոնց գլուխներին ծածանում էին ջայլամի սպիտակ փետուրներ։ Այդ կառքերում բաղմած էին թանկագին և փայլուն զգեստներով, գաւազանակիր արարողապետներ, սենեկապետներ, դրանիկ աւագանի, օտար արքայազունների աւագ պալատականներ, դրանիկ հօֆմարշալներ և այլն։

Ապա կրկին սկսվում էր գեղեցկատեսիլ և ճոխ հագնված թիկնապահ այրուձիի վաշտերը։ Դրանց ոսկեգոյն պղնձեայ զրահներն ու սաղաւարտները փայլում էին արեգակի ճառագայթներից, իսկ խրոխտ սանձակոծ երիվարները կարծես պարում էին օդի մէջ։ Առհասարակ ասկին, արծաթը և ծիածանի բոլոր գոյները թափել էին իրանց բոլոր հրաշալիքներն այդ բոլոր խմբերին շլացուցիչ, զմայլեցնող տեսք տալու համար։ Այս հեծելախմբի վերջում էր Մօսկվայի ոստիկանապետը։

Հանդէսի սկիզբն արդէն կորչում էր յաղթական կամարի միւս կողմում։ Հրաշալի տեսարան էր ներկայացնում արեգակի տակ պսպղող և վառ գոյներով փայլող այդ շարժուն երկար շերը, որը սաստիկ տարբերվում էր երկու կողքից կանգնած հետեւակ զօրքի և ժողովրդի մութ զգեստներից։ Կարծես սպիտակ փրփուրով ծածկված գետ լինէր հոսում սև ափերի միջով, շոշշոլով արեգակի տակ և ծիածանի բոլոր գոյները անդրադարձնելով իր անթիւ ալիքներից։ «Ուրան» քանի գնում սաստկանում է։ Հեռուից երեւաց Թագաւոր Կայսրը. բոլոր գլուխները բացվեցան։ Ահա համրաքայլ մօտենում է Ռուսաստանի հարիւր միլիօն ժողովրդի երիտասարդ Միապետը, հեծած իր սպիտակ գեղեցիկ և խրոխտ նժոյգը։ Նրա յետեւից մի փայլուն, շքեղ ու ստուար խումբն է գալիս, բաղկացած պատերազմական և բարձրագոյն դրան մինիստրներից, մեծ իշխաններից, օտար արքայազուներից, որոնց թւում և Բոլգարիայի և Չերնոգորիայի իշխանները, ֆրանսիական արտակարգ դեսպանից, բազմաթիւ գեներալներից և բարձրաստիճան անձերից։ Ժողովրդի ուրաների թնդիւնը, որ յուզված ծովի հառաչանքի է նմանում, զանգակների ձայները, թնդանօթաձգութիւնը աղմկել են ամբողջ Մօսկվան։ Գլխարկների, թաշկինակների չարժումներով և ոգեորված «ուրաներով» ուս ժողովուրդը ողջունում էր իր Ցարին, նրա մօրը և ամուսնուն։

Թագաւորի շքախմբից յետոյ մօտենում էին Կայսրուհիների ոսկեզօծ ծածկած կառքերը։ Առաջինում բաղմած էր այրի Թագուհին, իսկ երկրորդում Ալեքսանդրա Ֆեոդորովնան։ Այդ թանգագին կառքերին լծված են ութ ութ ձիւնի պէս սպիտակ և ճոխ զարդարված նժոյգներ։ Կառքերը շրջապատում են փայլուն զգեստներ հագած սպասաւորներ, թիկնապահներ, մանկլաւիկներ, սպաներ և շտաբմէյստրներ։ Թագուհիների կառքերից յետոյ գալիս են, վեց-վեց ձի լծած, ոսկեզօծ ծածկակառքերում, հէյլէնացոց թագուհին և մեծ իշխանները։ Այդ բոլոր կառքերի ետեւից կրկին խաղում էին հրաշալի երիվարներ հեծած՝ կիրասիրների և ուլանների գեղեցիկ գնդերը։ Ապա դարձեալ ոսկեզօծ կառքեր՝ բարձրաստիճան նաժիշտների և տիկինների համար։ Հանդիսաւոր գնացքը պարփակվում էր հուսարների, ուլանների և կօզակների զմայլեցուցիչ հեծելախմբերով։

Յաղթական կամարների մօտ հանդիպեց Կայսրին և միացաւ նրա շքախմբին Մօսկվայի գեներալ-նահանգապետը, Մեծ Իշխան Սերգէյ Ալեքսանդրովիչը։ Այնուհետև ճանապարհի որոշ տեղերում դիմաւորում էին Մօսկվայի քաղաքագլուխը ձայնաւորների հետ միասին, վաճառականների, արհեստաւորների, զեմստվոների և ազնուականութեան ներկայացուցիչները։ Իվերեան մատուռի մօտ Կայսրը իջաւ ձիուց, իսկ Կայսրուհին կառքից և համբուրեցին Տիրամօր պատկերը։ Ապա նոյն կարգով մտան Կրասնայա հրապարակը, ուր ժողովրդի անթիւ բազմութեան ցնծալից աղաղակներ միախառնվում էին Կրեմլի եկեղեցիների և թնդանօթների ուժգին հարուածների հետ։ Սպասկիա դարպասի մօտ դիմաւորեց Մօսկվայի կօմենդանտը։ Հանելով մեծ զանգակատանը, Նոցա Մեծութիւնները իջան և մտան պալատի բակը, որի շուրջը բարձրաստիճան ներկայացուցիչների համար շինված էին՝ դիտելու համար՝ տրիբուններ։ Այդտեղ էին նստած կաթոլիկ և բողոքական հոգեորականների մօտ նաև Երեմեա և Արիստակէս արքեպիսկոպոսները։—Պալատի բակում գտնվում են երեք նշանաւոր տաճարներ, որոնց թւում Ուսպենսկիյ սօբօրը, որի նախադատիում օրհնած ջրով, խաչ ու խաչվառով և երգեցողութիւններով դիմաւորեց Նոցա Մեծութիւններին հոգեորականութիւնը, Պետերբուրգի միտրոպոլիտ Պալլադիյի առաջնորդութեամբ։ Աղօթելով տաճարներում, Նոցա Մեծութիւնները բարձրացան պալատ։

Երեկոյեան ժամի 9-ից ամբողջ քաղաքը լուսաւորված էր գոյնզգոյն ճրագներով։ Մանաւանդ աչքի էին ընկնում քաղաքային դումայի, գեներալ-նահանգապետի և պալատի դիմացի տների հրավառութիւնները և զանազան հրապարակներում գոյզգոյն չատրուանները։ Մինչև գիշերվայ ժամի 1-ը փողոցները լիքն էին զբօսնող ժողովրդով։

Լ.

ՆԱՄԱԿ ՆՈՒԻՈՒՅ

—

Մայիսի 8-ին

Վերջապէս Նուխումն էլ կատարվեցին քաղաքային ընտրութիւնները։ Ընտրութիւնները նշանակված էին մայիսի 1-ին, բայց որովհետև այդ օրն անկարելի եղաւ վերջացնել, ուստի շարունակութիւնը կատարվեց մայիսի 5-ին և տեւեց մինչև գիշերվայ 10 ժամը։

Ժողովին մասնակցում էին 232 մարդ, որոնցից հազիւ 40-ը հայեր էին։ Քուէարկողների թիւը հասաւ 23-ի, որոնց անունները ցուցակագրվեցին ստացած ձայների թւի կարգով, բայց որովհետև քուէարկութեան համար պատրաստած կար միայն 17 տուփ, ուստի ընտրութիւնները երկու անգամ կատարվեցին, նախ՝ առաջին 17-ի համար, ապա մնացած 6-ի համար։ Համաձայն կարգադրութեան, եօթը ձայնաւոր պէտք է ընտրվեն հայերից և եօթը մահմէտականներից, իսկ մնացածները, համաձայն ժողովի որոշման, պէտք է համարվէին կանդիդատներ։ Առաջարկված 23 հոգուց 12-ը հայեր էին, իսկ 11-ը մահմէտականներ, ուստի ակներև էր, որ հայերից 5 կանդիդատ էր լինելու, իսկ մահմէտականներից՝ 4. բայց այս մասին քուէարկութեան սկզբում ոչ ոք չը բողոքեց։ Ընտրութիւնները կատարվեցին շատ հանդիստ և կանոնաւոր կերպով։

Հայերից ընտրվեցան հետեւեալները ձայնաւորներ՝ Գր. Մարգարեան, Ա. Մակեդոնեան, Ա. Սաֆարեան, Յ. Մանուկեան, Ա. Ներսէսեան, Մ. Բաբաջանեան և Դ. Սարգսեան։ Կանդիդատներ՝ Յ. Իշխանեան, Պ. Ահարոնեան, Յ. Մուրադեան, Գ. Ղուկասեան և Յովհ. Տէր-Պողոսեան։ Թէ որքան աջող էր հայերի համար այս ընտրութիւնը, և թէ որքան արժանաւոր մարդիկ ընտրվեցան, դա ապագայի գործ է. հետաքրքիր է այն հանգամանքը, որ թուրքերը արդիւնքը իմանալուց յետոյ հիասթափվեցան, որովհետև իրանց կանդիդատների թւում ընկան այնպիսիները, որոնց երեսի ուզում էին ձայնաւորներ ունենալ և ընդհակառակն. ուստի, աչքի առաջ ունենալով և այն հանգամանքը, որ իրանք բացարձակ մեծամասնութիւն են կազմում, ուրեմն իրանց կարծիքով կարող են անկասկած համարել և բեկանել ընտրութիւնը, նրանք առաջ բերին մի հասարակ պատճառ, թէ ինչու հայերից 5 կանդիդատ լինի, իսկ թուրքերից 4 հոգի։ Այս հասարակ պատճառաբանութիւնից յետոյ նրանք հրաժարվեցին ստորագրվելուց։ Նախագահ Ա. Մակեդոնեանը, որը ամեն կերպ աշխատում էր ընտրութիւնները կանոնաւոր կատարել և որ գլխաւորն է՝ խաղաղութեամբ վերջացնել, առաջուց կանդիդատներից մէկի համաձայնութիւնը ստանալով՝ յայտնեց, որ այդպիսի չնչին բանի համար աւելորդ է համարում տարաձայնութեան տեղիք տալ և հայ կանդիդատներից հինգերորդին հանելով ցուցակից, հաւասարեցնում է թուրք կանդիդատների թւի հետ։ Բայց թուրքերը չը բաւականացան դրանով. նրանց միտքը այդ չէր. երբ տեսան, որ իրանց առաջ բերած պատճառը մէջտեղից վերացաւ, նրանք մտածեցին մի ուրիշ պատճառ։ Սկսեցին բողոքել, թէ ինչու երկու անգամ կատարվեց ընտրութիւնը։ Գուցէ նրանք, որոնք երկրորդ քուէարկութեան ժամանակ քիչ քուէ ստացան, աւելի կը ստանային, եթէ առաջին անգամ քուէարկվէին, և գուցէ նրանք կընտրվէին ձայնաւոր և ոչ կանդիդատ։ Նախագահը բացատրեց նրանց, որ ինքը կատարել է համաձայն կանոնադրութեան, կարգով։ Բայց ով էր հասկացողը. թուրքերից երկուսը, որոնք կանդիդատ էին ընտրվել, զինեցին բոլոր թուրքերին, և ինչ իրանք ասացին, բոլոր թուրքերը միաձայն ոչխարների նման աղաղակում էին նոյնը...

Այսպէս թէ այնպէս, թուրքերը չը ստորագրեցին և հեռացան։ Թերթը վաւերացրեց նախագահը, իր և ոստիկան պաշտօնեաների ստորագրութեամբ, որպէս վկաների։ Երեսի մօտ օրերս կուղարկվի նահանգապետին։ Թուրքերը երեսի կը բողոքեն։

Ձայնաւորների ընտրելուց յետոյ շատ հեշտ է մեզ գուշակել, թէ ով է լինելու քաղաքային աւագը։ Այդ պաշտօնի համար եղած թեկնածուներից հաւանականաբար կընտրվի Ա. Մակեդոնեան և սա ամենաաջող ընտրութիւնը կը լինի, քանի որ նուիրեցի հայերից այդ պաշտօնի համար ամենաարժանաւորը սա է։

Ա. Մ.

ՆԱՄԱԿ ԳԱՆՁԱԿԻՑ

—

Մայիսի 15-ին

Երէկ, մայիսի 14-ին, դեռ առաւօտեան ժամը 6-ին բոլոր եկեղեցիներում սկսվեց զանգակահարութիւն Նոցա Մեծութիւնների թագադրութեան առիթով։ Հայոց եկեղեցիներում պատարագը վերջացնելուց յետոյ բոլոր հոգեորականները հաւաքվեցին ս. Յովհաննէս մայր եկեղեցին, որտեղ ժամը 11-ին սկսվեց պատարագը։ Պատարագիչն էր Թաւաքալեանց վարդապետը։ Պատարագից յետոյ հայր սուրբը մի քարոզ խօսեց տօնի առիթով։ Հայր սուրբի գեղեցիկ քարոզը լաւ տպաւորութիւն ունեցաւ ամենի վրա։ Ապա կատարվեց գոհաբանական աղօթք. եկեղեցին լի էր հասարակութեամբ։

Ուղիղ ժամը 12-ին, երբ ստացվեց Նոցա Մեծութիւնների օծման հեռագիրը, իսկոյն և եթէ պարզվեցին տների, խանութների և այլ հիմնարկութիւնների վրա դրօշակներ։ Շատ տեղեր զարդարված էին կանաչով, վահաններով։ Բոլոր եկեղեցիների բակերը, այլ և յաջորդարանը զարդարված էին դրօշակներով։ Մի քանի տեղեր յաղթական կամարներ էին շինված. քաղաքի ամեն կողմերից զուռնաների ձայներ էին լսվում և ժողովուրդը կեր ու խումով ուրախանում էր։ Օրը գեղեցիկ և պայծառ էր. երեկոյեան լուսաւորված էր քաղաքը և հրախաղութիւն էր. երկաթուղու կայարանում, քաղաքային այգում, մեծ կամուրջի մօտ և այլ նշանաւոր վայրերում ժողովրդի անհամար բազմութիւն էր հաւաքվել։

Իսկ այսօր հայ վաճառականները քաղաքային այգում ճաշկերոյթ ունէին. մօտ 400 աղքատների և մշակների ճաշ տրվեց մայր եկեղեցու բակում։ Քաղաքը թէ դրա և թէ այլ ծախսերի համար նշանակել էր 1,500 ռուբլի։

***

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

—

Խանքէնդի, ապրիլի 25-ին

Անցեալ 1895 թւի դեկտեմբերին մի խնդրագրով դիմել էի Շուշու հայոց կօնսիստորիային՝ ծննդական վկայական ստանալու համար։ Զափաբերական մատեաններում իմ անունը չէին գրտնում, և այդ պատճառով քննութիւն է նշանակվում։ Ներկայ թուականի յունվարին քննութեան արդիւնքը կօնսիստորիան ստացաւ, սակայն մինչև այժմ վկայական չէ տուել։ Որովհետև պետական ծառայութեան մէջ եմ գտնվում և ինձանից ծննդական է պահանջվում, ուստի քանի անգամ գնացի կօնսիստորիա և բանաւոր կերպով խնդրեցի, որ չտալեցնեն։ Սակայն բացի այն, որ կօնսիստորիայում ծառայողները զբաղված են իրանց պարտքը կատարել, նրանք այնպիսի խօսքերով են պատասխանում, որ զբաղուար է լինում երկրորդ անգամ դիմել այդ ծառայողներին։—Ուստի, դիմելով ձեզ, խնդրում եմ տեղ տալ այս երկտողիս «Մշակի» մէջ, որ գոնէ այդ միջոցով մի հետեանքի հասնեմ, որպէս զի դէթ թեմի կառավարիչը ուշադրութիւն դարձնէ այդպիսի զեղծումների վրա և անբաւականութիւնների տեղիք չը տայ։ Կրկնում եմ, որ դեռ մինչև այսօր, 5 ամսվայ ընթացքում, ծննդական չեմ ստացել, չը նայելով՝ որ պահանջված ծախսը սկզբից եմ վճարել։ Աւելացնեմ և այն, որ այդ պատճառով իմ իշխանութիւնը ինձ դաղար չէ տալիս։ Արդեօք Ք.ը պէտք է հոգեոր վարչութիւնների մէջ կամայականութիւններին վերջ տրվի։

Պօստատան ծառայող՝ Ս. Ալահվերդիբեկեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

«Մշակի» այսօրվայ համարը բաղկացած է թերթ ու կէսից։

—

Մայիսի 16-ին, թագադրութեան տօների երրորդ օրը, Իւնկերների դպրոցի հրապարակում վաղ առաւօտից հաւաքվեցան Թիֆլիսի բոլոր դպրոցների աշակերտները և աշակերտուհիները։ Ժամի 10-ին կառավարչապետի օգնական կոմս Ցատիշչեվի, ուսումնարանական շրջանի հոգաբարձու պ. Եանովսկու, նահանգապետ իշխան Շերվաշիձէի և այլ բարձրաստիճան անձինքների ներկայութեամբ Ալեքսանդր եպիսկոպոսը բազմաթիւ ռուս հոգեորականութեան հետ կատարեց ժաղթանք, որից յետոյ զանազան դպրոցների աշակերտական երաժշտական խմբերը միասին նուագեցին թագադրութեան նուիրած երաժշտական կտորներ. մի և նոյն ժամանակ երգում էր 400 աշակերտներից կազմված խումբը։ Կոմս Ցատիշչեվ շնորհաւորեց տօնը և բարեմաղթութիւններ արաւ թագաւոր Կայսրի և Թագուհի Կայսրուհու համար։ Բոլոր աշակերտները և աշակերտուհիները երկարատև ուրաներով ընդունեցին այդ խօսքերը. խումբը նուագեց «Боже, Царя храни!»։ Հանդէսի վերջում աշակերտները և աշակերտուհիները հանդիսաւոր մարշով անցան կոմս Ցատիշչեվի առաջ և նրա ողջոյններին պատասխանում էին «рады стараться, ваше сіятельство» խօսքերով։ Այնուհետև իւրաքանչիւր դպրոցի աշակերտները և աշակերտուհիները կարգով գնացին Միքայէլեան փողոցով դէպի իրանց դպրոցները։ Աշակերտները և աշակերտուհիներից շատերը տանում էին եռագոյն մեծ և փոքր դրօշակներ։ Միքայէլեան

փողոցում հաւաքվել էր ահագին բազմութիւն՝ հանդէսը տեսնելու համար: Կառքերի և ձիաքարշի երթևեկութիւնը դադարեցրած էր: Օրը գեղեցիկ էր, պարզ և տաք: Երեկոյեան սկսեց անձրևը, բայց և այնպէս փողոցները, տները նախընթաց երկու օրերի նման լուսաւորված էին:

—

Մեզ հաղորդում են, որ Ներսիսեան դպրոցի հոգաբարձութեան մէջ միտք է ծագել դպրոցի շինութիւնը կառուցանել Վանքի մօտ գտնվող դպրոցական դեռնի վրա: Ինչպէս յայտնի է, Կաթողիկոսը մերժեց հոգաբարձութեան խնդիրը՝ դպրոցը շինել Նաբերեժնայա փողոցի վրա, և ահա այժմ հոգաբարձութիւնը նորից մտածում է դպրոց շինել մի այնպիսի անպէտք, ամեն կողմից անյարմար տեղ, ինչպիսին է Վանքի մօտ գտնվող դեռինը:

—

Մեզ հաղորդում են, որ հայոց մի քանի դպրոցների վարչութիւններ չեն ուզում վճարել ուսուցիչների ռոճիկը և նեղութիւն են տալիս մեր անպաշտօն մնացած դպրոցական գործողներին: Մի այդպիսի վարմունք պատիւ չէ բերում մեր դպրոցների հոգաբարձութիւններին:

—

Այս տարվայ ցրտերի պատճառով Անդրկովկասի լեռնային կողմերում ուշ է սկսվում գարունը: Թափառականները, որոնք թողել են դաշտերը և անապատները, հասնելով լեռնային արօտատեղերին, չեն վտահանում բարձրանալ, այլ մի կերպ կառավարվում են լեռների ստորոտներում:

—

Այս տարի Երևանեան նահանգը պէտք է ուղևորվի ֆիլօքսերային մի յատուկ խումբ՝ հետազօտութիւններ անելու նախ Երևանի շրջակայքում և ապա ուղևորվելու նահանգի միւս մասերը: Խմբի գլխաւորն է Ա. Բոլլով:

—

Վաղը բանկի թատրոնում լինելու է հայոց ներկայացում: Պէտք է խաղան «Սիւզան և Խմբեր» պիէսը, մասնակցութեամբ պօլսեցի դերասանուհիներ՝ Հրանոյշի և Վարդիթերի:

—

Անցեալ տարվայ ընթացքում խաղողի այգիներին հասած վնասները ստիպեցին այգեգործներին լուրջ ուշադրութիւն դարձնել խաղողի վաղի հիւանդութիւնների վրա և գարունը բացվելուն պէս գինեգործական ամեն շրջաններից սկսեցին ձեռք բերել ծծումբ, պղնձի արջասպ և գործիքներ: Կովկասեան Գիւղատնտեսական ընկերութիւնը միայն այս գարնանը ծախել է 600 պուդ ծծումբ և 400 պուդ արջասպ: Հիւսիսային Կովկասում նոյնպէս գործադրվում են միջոցներ հիւանդութիւնների դէմ:

—

Անդրկովկասի զանազան տեղերից ստացած տեղեկութիւնները ցոյց են տալիս, որ շերամի որդը շատ տեղ աջող սկսել է զարգանալ. բայց գիւղացիները երկիւղ են կրում, որ անձրևների պատճառով թթենիների տերևները կարող են վնաս տալ որդերին:

—

Լսում ենք, որ Հրատարակչական ընկերութեան մէջ միտք է ծագել հրատարակել մի շարք մանկական գրքեր, շքեղ պատկերներով և շքեղ տպագրութեամբ:

—

ԳԱՆՁԱԿԻՑ մեզ գրում են. «Մսիս 3-ին, երեկոյեան 8 ժամին մեր քաղաքի յաջորդի մօտ ս. Յովհաննէս մայր եկեղեցու ծխականների ժողով էր նշանակված: Ժողովի քննութեան առարկան էր՝ նոյն եկեղեցու փակած դպրոցների ուսուցիչներին ռոճիկ վճարելու հարցը: Հոգաբարձուները պահանջում էին երէցփոխից օժանդակութիւն, իսկ երէցփոխը մերժում էր, ասելով փող չը կայ: Հոգաբարձուները միակ ելքը գտնում էին դարձեալ փոխառութիւն անելու մէջ, իսկ երէցփոխը խոյս էր տալիս: Մեծամասնութիւնը դէմ էր փոխառութեանը: Ժողովում պարզվեց, որ 1894—95 ուսում. տարվայ յունիսին հոգաբարձութիւնը ունենալով 760 ր. ուսուցիչներին բաւարարութիւն տալու համար, այնու ամենայնիւ, տիկին Նանասեանից պարտք է վերցրել 1,100 ր. 12 տոկոսով և մինչև այսօր էլ այդ փողը մնում է իր մօտ, իսկ պարտքը մինչև այժմ մնում է իր տոկոսով: Ինքն ըստ ինքեան հարց է ծագում. այդ փողը ում և ինչի համար էին պահում: Երբ անցան երէցփոխի հաշիւն, երևաց որ այդ հաշիւն էլ ամենաողորմելի դրութեան մէջ է. հաշուետուները չեն վաւերացրել հաշուեմատեանը. թերութիւնները արձանագրած՝ յայտնել էին հոգևոր կառավարութեան, իսկ երէցփոխը չէ կամենում հաշուետուների իրաւացի պահանջին բաւականութիւն տալ, նոր չինած բաղանիքի մուտքի և ծախսի հաշիւ տալու համար մի բան անգամ չէ ուզում լսել և այլն և այլն: Հարցնում ենք, մինչև երբ պէտք է շարունակվի այսպէս:»

—

ԿԻԵՎԻՑ մեզ գրում են. «Այստեղ հասարակութեան համար ի ցոյց դրված «Մուզէյ և պանսօպտիկումի» մէջ, ի միջի այլ և այլ տեսարանների, հանդէս են դրված և քաղաքական մի քանի խոշոր անցքեր, օրինակ՝ իտալացիների ճակատամարտը աբիսինացիների դէմ Ադուայի մօտ, թիւրքերի յարձակումը հայերի վրա Կ. Պոլսում և Տրապիզօնում, և թիւրքերի ու հայերի արիւնահեղ կռիւը Էրզրումում»:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Ուլիամ Ռատսօն հրատարակել է Անգլիայում ոտանաւորների մի գրքոյկ, որ կրում է «Կարմիր Արեւելք» անունը: Ոտանաւորների նիւթն է Անգլիայի կատարած տխուր դերը հայոց հարցում: Գրքոյկը կրում է՝ «The Purple East: a Series of Sonnets on England's Desser-tion of Armenia» վերնագիրը:

—

Գերմանիայի բողոքական հոգևորականութեան շրջանում այժմ սաստիկ հետաքրքրվում են Փոքր-Ասիայի քրիստոնեաների վիճակով: Խօսվում են քարոզներ, կատարվում են ժողովարարութիւններ՝ դրամական օգնութիւն հասցնելու Փոքր-Ասիայի կարօտեալներին:

—

Լորդ Բոզբէրիի ճառին «Новости» լրագիրը մի առաջնորդող է նուիրել, որի մէջ հետևեալն է ասում. «Հայոց հարցում ոչ մի բան այլ ևս չէ կարող վերականգնել Անգլիայի նախկին դիրքը: Այդ կէտում համոզված են, կարծէք, և աղատամիտները և պանսլաւականները: Երկուսն էլ յանցանքը միմեանց վրա են դցում, բայց իրօք երկու կուսակցութիւններն էլ մեղաւոր են: Աղատամիտ կուսակցութիւնը մեղաւոր է նրանով, որ միակողմանի կերպով միջամտեց հայկական գործերում և չը չափեց իր ոյժերը, իսկ պահպանողական մինիստրութիւնը մեղաւոր է նրանով, որ մեծ սխալ գործեց, երբ սկսեց սպառնալ սուլթանին պատերազմով և մինչև անգամ դահընկեցութեամբ, թէև ինքն էլ համոզված էր, որ չէ կարող իրագործել իր սպառնալիքները:»

—

Էրզրումից գրում են Լոնդօնի լրագիրներին. «Դեռ շարունակվում է այն կարօտ և թշուառ վիճակը, որին մատնվեց ամբողջ վիլայէթը և հայ ազգաբնակութեան երկու երրորդականը: Առնուազը 50,000 հոգի քաղցած, զրկված աղամարդ, կին և երեխաներ օգնութիւն են աղերսում: Հաղարաւոր այրիներ և որբեր իրանց ողորմ պատմութիւններով սարսափեցնում են մարդու: Նրանք չեն կարողանում մոռանալ սեպտեմբեր, հոկտեմբեր, նոյեմբեր և դեկտեմբեր ամիսների դժոխային տեսարանները և ոչ մի յոյս չունեն ապագայի մասին: Ժողովուրդը վախում է, որ մի գուցէ սարսափները կրկնվեն, որովհետև թիւրքերի և քիւրդերի սպառնալիքները չեն վերջանում և այժմ:»

—

Անգլիական «Daily News» լրագրում հրատարակված է Էրզրումից, դեռ մարտ ամսին գրած, մի նամակ, որ նկարագրում է իրերի վիճակը հետևեալ կերպով. «Մենք ամենայն օր այստեղ 4,000 մարդու հաց ենք տալիս, և ապրուստ ենք մատակարարում մօտ 40 գիւղի, իւրաքանչիւր մարդու տալով օրը 1/2 պկկ հաց: Վիլայէթի մեծ քաղաքները, և գիւղախումբերի կենտրոնատեղիները նշանակված են իբրև նպաստ բաժանելու կէտեր, շրջակայքի համար: Այդ բոլոր կէտերում կազմված են առանձին մանաժողովներ, որոնց վրա հսկում է Էրզրումի կենտրոնական մանաժողովը և տալիս է գործելու հրահանգներ: Դրամ տրվում է միայն բացառիկ դէպքերում, որովհետև թիւրքերը, քիւրդերը և նոյն իսկ կառավարութիւնը հետամուտ են, թէ որտեղ փող կայ, որ վերցնեն: Իսկ առհասարակ բաժանելու համար գործ են ածվում հաց, ցորեն, զգեստներ և անկողիններ: Էրզրումից դուրս ուղարկում է այդ գործողութիւնը: Մենք ուղարկում ենք տեղական մանաժողովներին դրամ, իսկ նրանք ձեռք են բերում մթերք և բաժանում կարօտեալներին:»

—

Անգլիայի ազատամիտ կուսակցութեան պարագլուխ լորդ Բոզբէրին նորերս մի մեծ քաղաքական ճառ արտասանեց Նիւտոն-Աբբոտում, որի մէջ խօսեց և անգլիական այժմեան արտաքին քաղաքականութեան ու հայոց հարցի մասին:

«18 տարի սրանից առաջ Անգլիան ողջունեց լորդ Բիկոնսֆիլդի և մարքիզ Սալսբիւրիի վերադարձը Բերլինից. նրանք աշխատել էին այնպիսի պայմանագիր կնքել, որով կարելի լինի Թիւրքիայի քրիստոնեայ ազգաբնակութիւնը ազատվեցնել թիւրքական կամայականութեան դէմ: Բայց այժմ յայտնվում է, որ Բ. Դրան հետ կնքած նրանց Կիպրոսի դաշնագիրը, որ բրիտանական կառավարութեան իրաւունք է տալիս միջամտել թիւրքաց գործերի մէջ, ոչ մի իրական նշանակութիւն չունի: Ինչի համար: Որովհետև դուք չէք կարող ուղարկել ձեր նաւատորմը Փոքր-Ասիայի կենտրոնը: Բայց չէ՞ որ Կիպրոսի դաշնագիրը կնքելու ժամանակ այդ անկարելիութիւնը գոյութիւն ունէր: Դաշնագիրը կնքված է, ուստի և Անգլիան պարտաւոր է զբաղվել հայերի վիճակով: Անգլիայում կայ քրիստոնէական հասարակական կարծիք, որը չէ կարող անտարբեր մնալ դէպի այն անգթութիւնները, որոնց ենթակայ են հայերը վերջին երկու տարիների ընթացքում: Լորդ Սալսբիւրին մտածում էր օգնել նրանց սպառնալիքներ անելով սուլթանին: Մենք շատ լաւ գիտէինք, որ սուլթանը պէտք է հերքի հայերի դէմ գործած դաղանութիւնների փաստը և պնդեցինք խիստ քննութիւն կատարելու մասին: Սուլթանը երկար վէճերից յետոյ համաձայնվեց քննութիւն բանալ և նա սկսվեց ճիշդ այն միջոցին, երբ ազատամիտ մինիստրութիւնը զիջեց իր տեղը պահպանողականին: Ի՞նչ արեց լորդ Սալսբիւրին այդ քննութեան հետ: Նա դուրս եկաւ անբաւարար: Մենք նոյնպէս առաջարկեցինք Հայաստանի համար իրական ռէֆօրմների ծրագիրը: Ի՞նչ արեց լորդ Սալսբիւրին այդ ծրագրի հետ»:

Այդ բոլորի հիման վրա, լորդ Բոզբէրին ամբաստանում է լորդ Սալսբիւրիին իսկական փաստերը կեղծելու մէջ, ինչպէս նա այդ թոյլատրել է իրան Primrose ընկերութեան ժողովում:

ՆԱՄԱԿ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ

Սալմաստ, ապրիլի 29-ին

«Սև եղը վայր ընկաւ, դանակաւորները շատացան»,—ասում է հայկական առածը: Այժմ սև եղը հայն է, վայր է ընկել. փոխանակ օգնութեան ձեռք կարկառելու, ամեն կողմից աքացիներ են թափում խեղճի գլխին:—Սալմաստումն էլ ջանք են թափում պարսիկներին կռուեցնել հայերի հետ: Պղտոր ջրում ձուկ որսողներ քիչ չը կան: Իրանց անձնական շահերն աչքի առաջ ունենալով, մի քանի կալուածատէրեր, որոնց մէջ գտնվում է և շեյխ-իսլամը, սարվարատը (արտաքին գործերի մինիստրի գործակալը, քրիստոնեաների դատաւորը) և չիկակ քիւրդ Մահմադ-փաշան (սա այն անձնաւորութիւնն է, որ անցեալներում պարսից դէմ ապստամբվեց և անցաւ Թիւրքիա, ուր այնքան զազրալի չարագործութիւններ կատարեց, որ մինչև անգամ թիւրքաց կառավարութիւնը ստիպված էր հալածել և փախցնել նրան դէպի Պարսկաստան), դրանք միասին հեռագիր հեռագրի ետևից ուղարկում են Թաւրիզ և հայերի վրա անլուր զրպարտութիւններ անում: Սրանց շարքն է մտել և կաթոլիկ Մոսէս վարդապետը. այդ սեահոգի ապիրատը մի գանգատ է գրել Թաւրիզի պարսից վարչութեան, որով զրպարտում է, իբր թէ հայերը աշխատում են խառնակել երկիրը, իբր թէ կաթոլիկները անապահով դրութեան մէջ են, և պաշտպանութիւն է խնդրում կառավարութիւնից:

Ամեն մի սպանութիւն, ամեն մի գողութիւն աշխատում են վերագրել հայերին: Օրինակ, մի քանի օր սրանից առաջ Սալմաստից դէպի Թաւրիզ տանող ճանապարհի վրա թալանվում է սալմաստեցի մի հարուստ պարսիկ վաճառական: Սովորութեան համաձայն այդ գործողութիւնը վերագրում են հայ «զաչաղներին». ամբողջ մուսիւլման ժողովուրդը վրդովվում է դրանով և պատրաստվում են դիմել կառավարութեան՝ հայերին զսպելու համար: Բարեբաղդաբար, աւազակները բռնվում են: Բանից դուրս է գալիս, որ աւազակները հայի չորեր հագած պարսիկներ են՝ Միրզա-Ալի-խանը՝ անցեալ տարվայ Սալմաստի սարվարատը (քրիստոնեաների դատաւորը) և մի քանի ուրիշ պարսիկներ: Առաջին անգամն է, որ մահմետականը գործում է հայ անուան տակ: Ասում են, որ այդ դիմակաւորված աւազակութեան մէջ խառն է յայտնի թշնամու մատը:

Պարսիկները վախում են կամ ցոյց են տալիս իբր թէ վախում են հայերից, իսկ հայերը և սրանց հետ պարսիկները ու ասորիները սարատի մէջ են: Լուրեր են տարածում, իբր թէ չէյխ Իբադուլլահի թոռը պատրաստվում է արշաւել դէպի Պարսկաստան: Պարսից զօրքերը ուղարկվում են Ուրմի, կենտրոնանալու Սինա-Սախկըզում: Անցեալ օրը մի ֆօվջ (հազար հոգի) զինուորներ անցան Սալմաստից, և ինչ զինուորներ. ամբողջ վաշտի մէջ երկու զինուոր չէիք գտնի, որոնց հագուստը միատեսակ լինէր. մէկի հագին չուխա է, միւսինը մի հին արխալուխ, սրա գլխին փափախ, նրան՝ թասակ, Ալու ոտին տրեխ, Վալուն՝ չուստ: Հրացանները բեռնել էին իշուկների վրա և ետեից խումբ-խումբ գնում. բայց հրացանների մեծ մասը «վարանդիլ» նոր ձեի գեղեցիկ հրաչէններ են: Վայը տարել է այն գիւղերին, որտեղ պիտի իջնեն պարսից սարվազները: Կարծես Դարեհ Վշտասպեանի ժամանակները լինեն: Ամեն ինչ վերցնում են ձրի, ուժով: Գիւղում այլ ևս ոչ յարդ են թողնում և հայ գիւղացիք անիծում են սարվազներին էլ և սրանց ուղարկողներին էլ: Բայց ժողովուրդը զօրքերը տեսնելով մի քիչ հանգստանում է: Իսկ այժմ, երբ պարսից նոր Շահը պահանջում է բոլոր նահանգներից զօրքեր՝ միասին Թէհրան գնալու համար, ժողովուրդը դարձեալ ահի մէջ է ընկել քիւրդի վախից: Վերջը տեսնենք ինչ կը լինի:

Մխ.

ՆԱՄԱԿ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ

Թաւրիզ, մայիսի 5-ին

Մուզաֆէր-էդ-դինի գահակալութեան պատճառով ամբողջ չորս գիշեր չուկաներում և քարվանսարաներում լուսաւորութիւն եղաւ: Այդ հանդիսի ժամանակ քաղաքում շրջում էին Էյնըդ-դովլան (քաղաքի կառավարիչը) և Շահի անդրանիկ որդին: Ապրիլի 24-ի գիշերը Արամեան դպրոցում հանդէս և հրախաղութիւն եղաւ, որին ներկայ էին թաղապետը և ուրիշ պաշտօնեաներ:

Ապրիլի 25-ին և 26-ին առաջնորդարանում ժողովներ կայացան, ուր որոշվեց քաղաքի հայ բնակիչների բոլոր զրկանքները արձանագրել և ներկայացնել Շահին, որպէս զի նա դրանց առաջն առնէ: Մայիսի 3-ին հայր Սարաֆեանը մի խումբ պատուաւոր հայերի հետ ներկայացաւ Նորին Վեհափառութեան և սիրալիր ընդունելութիւն գտաւ:

Մուզաֆէր-էդ-դին Շահը վաղը մօտ 20,000 զօրքով մեկնելու է դէպի իր մայրաքաղաքը: Իսկ մինչև այնտեղ հասնելը ժամանակաւոր կառավարիչ է կարգված Սադրազամը:

Շատերը կարծում են թէ Շահի մեծ եղբայր Զիլլը-Սուլթանը կարգը կը խանգարէ, բայց որքան մենք գիտենք, նա այդ մտադրութիւնը չունի: Այդ բանին գրաւական կարող է լինել այն հեռագիրը, որով Զիլլը-Սուլթանը հէնց գահակալութեան առաջին օրը շնորհաւորեց իր եղբայր Մուզաֆէր-էդ-դինին հօր գահը բազմելը:

Լուր է պատում թէ Շահի հեռանալուց յետոյ քաղաքում խռովութիւններ կը լինեն հացի և միւս պիտոյքների թանգութեան պատճառով:

Արշակունի

ԱԶԱՏԱՄԻՏ ԼՐԱԳՐԻ ԿԱՐԾԻՔԸ

Լորդ Բոզբերիի, ազատամիտ կուսակցութեան այդ նշանաւոր պարագլխի լուրջ և սրամիտ պատասխանը լորդ Սալսբիւրիի անպատկառ յայտարարութիւններին, զգալի կերպով վայր է դցում Սալսբիւրիի հեղինակութիւնը Փոքր-Ասիայի գործերի վերաբերութեամբ։ Ազատամիտ «Daily News» լրագիրը իր մի առաջնորդողում չեչտելով Բոզբերիի ճառի մեծ նշանակութիւնը, յայտնում է հետեւեալը։

«Լորդ Սալսբիւրին մեղադրում էր նախկին ազատամիտ մինիստրութիւնը, որ նա կոպիտ կերպով միջամտեց սուլթանի և նրա քրիստոնեայ հպատակների գործերի մէջ, թէև նա ոչ բարոյական և ոչ ֆիզիկական իրաւունք չունէր, և այդ պատճառով նա աւելի վատացրեց իրերի վիճակը. այդ հիման վրա, երբ ինքը Սալսբիւրին ստանձնեց իր պաշտօնը, իրան զգաց բոլորովին կաչկանդված։ Զգալով իր անկարողութիւնը՝ նա սկսեց յորդորներ կարդալ սուլթանին, թէև վաղօրօք համոզված էր, որ յորդորները ապարդիւն են անցնելու։ Լորդ Բոզբերին քանդեց Սալսբիւրիի առաջ բերած առարկութիւնները՝ խորտակելով նրանց իբրև թղթի շինութիւն։

«Միջամտելու իրաւունքը նախատեսված է դաշնագրով և լորդ Սալսբիւրին տասն և ութ տարի առաջ, երբ վերադառնում էր լորդ Բիկոնսֆիլդի հետ միասին Բերլինից՝ պարծենում էր այդ դաշնագրով։ Բրիտանական նաւատորմը պահպանում էր բոլոր ժամանակը իր ոյժը։ Գլադստոնը 1880 թ-ին գործ դրեց այդ ոյժը, երբ սպառնաց Զմիւռնիան ռմբակոծելու։ Լորդ Բոզբերի և Կիմբերլէյ չէին զբաղված յորդորներով սուլթանի դէմ։ Նրանք ֆրանսիական և ռուսաց կառավարութիւնների հետ սկսեցին կոտորածների հետազօտութիւն և մշակեցին բեֆօրմների ծրագիր։

«Լորդ Սալսբիւրիի բացատրութիւնները իր ձեռք առած միջոցների մասին շատ տխուր է։ Նա ինքը խոստովանում է, որ նրա յորդորները սուլթանին՝ միայն հանդիսաւոր ծաղր էին, ապարդիւն՝ գործի համար։ Սակայն անցեալ տարի նա յայտարարեց, որ հետևում է Բոզբերիի քաղաքականութեան և գործում է համերաշխ միւս պետութիւնների հետ։ Ցինիկական բացականչութիւններով նա կամենում է քողարկել իր դիպլոմատիական պարտութիւնը։»

ՊԱՐՍԿԱՍՏԱՆ

Ինչպէս յայտնի է, անգլիական Վիկտորիա թագուհին յանձնել էր Թէհրանի իր դեսպան Դիւրանդին՝ մի պսակ դնել Նասրէդդին Շահի դագաղի վրա։ «Kölnische Zeitung» հաղորդում է, որ այդ պսակի վրա հետևեալ մակագրութիւնը կայ. «Ի նշան ամենաանկեղծ բարեկամութեան, Վիկտորիա թագուհին և կայսրուհին»։ Դեսպանի մի քանի վշտակցական խօսքերին պատասխանելով, մեծ-վիզիրն ասեց, որ Շահի ընտանիքը երբէք չի մոռանայ թագուհու կողմից եղած այդ համակրական ցոյցը։

Լոնդոնից հեռագրում են «Manchester Curier» լրագրին, որ Թէհրանի անգլիական դեսպան Դիւրանդին նոր հրահանգներ են ուղարկված Պարսկաստանի հետ նոր առևտրական դաշնագիր կապելու մասին։ Այդ նոր դաշնագրի մասին բանակցութիւններ սկսվել էին դեռ Նասրէդդին Շահի կենդանութեան ժամանակ և որովհետև ներկայ Շահը, ըստ երևոյթին, աւելի լաւ է տրամադրված դէպի Անգլիան, քան իր հայրը, այդ պատճառով Լոնդոնում յոյս ունեն, որ այսուհետև Պարսկաստանը աւելի շատ բաց կը լինի անգլիական ձեռնարկութիւնների համար։

Մուզաֆէրէդդին Շահն ուղարկել է մարկիզ Սալսբիւրիին մի հեռագիր, որի մէջ շնորհակալութիւն յայտնելով նրան, խոստանում է «ընթանալ իր փառաւոր հոր շաւղով և մանաւանդ պահպանել բարեկամական յարաբերութիւնները Անգլիայի հետ»։

ՄԱԿԵԴՈՆԱԿԱՆ ԲԷՖՕՐՄՆԵՐԻ ԻՐԱԴԷՆ

Սուլթանի իրադէն, որով մտցնվում է բէֆօրմներ Մակեդոնիայի մէջ, հետևեալ կերպով է կազմված։

1) Ադրիանոպոլսի, Սալոնիկի, Մոնաստիրի և Կասովի վիլայէթներում հաստատվում են վարչական խորհուրդներ, ամեն մի խորհուրդ բաղկացած վեց անդամից, 3-ը մուսուլման, 3-ը քրիստոնեայ։

2) Դպրոցական դասատուութեան մէջ բարեփոխումներ են մտցնվում։ Թիւրքաց լեզուի ուսուցիչները պէտք է պահվեն կառավարութեան հաշուով։ Վերանորոգութիւնների կարօտ դպրոցները նորից պէտք է բացվեն՝ ամենակարճ ժամանակում վերաշինվելուց յետոյ։

3) Առանձին ուշադրութիւն պէտք է դարձնվի գիւղատնտեսական գործերի վրա և բոլոր ջանքերը պէտք է գործադրվեն գիւղատնտեսական արդիւնաբերութիւնը զարգացնելու համար։ Վաճառականներին և առևտրականներին ամեն տեսակ թեթևութիւններ պէտք է տրվեն և վաճառականութիւնը այդ նահանգներում ամեն տեսակ հոգացողութեան առարկայ պէտք է լինի։

4) Փողոցները և ճանապարհները այդ նահանգներում պէտք է վերանորոգվեն, իսկ նոր շինվող ճանապարհները պէտք է վերջանան ամենակարճ միջոցում։ Բոլոր հասարակական շինութիւնները, որոնք կարօտ են վերանորոգութեան, պէտք է վերանորոգվեն ամենակարճ ժամանակում։

5) Հացահատիկների տասանորդական տուրքերի հաւաքման եղանակը փոփոխութեան կենթարկվի։ Աղքատներին կը թոյլատրվի վճարել հարկերը մաս-մաս, իսկ երկրագործ-սփհականատէրերը բոլորովին կազատվեն երկրագործական արդիւնքներից հարկ վճարելուց։

6) Զինուորական ծառայութիւնից ազատ լինելու համար սահմանված հարկը, որը վճարում են քրիստոնեաները, պէտք է յարմարեցնվի իւրաքանչիւրի միջոցներին։

7) Հաստատվում են ֆինանսական, դատաստանական և վարչական գործերի համար տեսուչներ։ Տեսուչները պէտք է գտնվեն վարչական խորհուրդների մօտ։ Նրանց լիազօրութիւնը չարունակվում է երեք տարի։

8) Ամեն մի նահանգի գլխաւոր-նահանգապետի մօտ նշանակվում է մի օգնական։

9) Նոր եկեղեցիների շինութեան համար թոյլատուութիւնը տրվում է առանց յետաձգման։

10) Ժանդարմէրիայի տասերորդ մասը յիշեալ նահանգներում պէտք է լինեն ոչ-մուսուլմաններ։

„ՄՇԱԿԻ“ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՑ ԴՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

ՄՈՍԿՎԱ, 15 մայիսի։ Իսկոյն՝ թագադրութիւնը վերջանալուց յետոյ, Գրանովիտեան պալատը հաւաքվեցին՝ սրբազան սինոդը, առաջին և երկրորդ կարգի երկու սեռի անձինք, բարձր պաշտօնեաները, Օգոստափառ հիւրերի սվիտաները և կանգնեցին սեղանների մօտ։ Մօտ երեք ժամին ամեն բան պատրաստ էր։ Նոցա Մեծութիւնները թագերով և ծիրանիներով գնում էին դէպի Գրանովիտեան պալատը՝ ուղեկցութեամբ ասիստենտների, պալատի մինիստրի, զինուորական մինիստրի, գեներալ-ադիւտանտ Ռիխտերի, սվիտայի գեներալ-մայորի, Ֆլիդել-ադիւտանտի և կավալերդարդեան գնդի հրամանատարի։ Գահական դահլիճում թագաւորը ընդունեց գայիսօնը և գունդը։ Ընթացքը բաց են անում՝ ատաղ-արարողապետները, պալատի առաջին պաշտօնեաները, հօֆմարշալը և հերոլդները։ Թագաւորի աջ կողմից գնում էին գեներալ-ադիւտանտները, սվիտայի գեներալները, ձախ կողմից գնում էին՝ ստատս-սեկրետարները և պալատի երկրորդ պաշտօնեաները։ Ետևից գնում էին Կայսերական ընտանիքի անդամները, օտարազգի անձինք, հօֆմէյստերուհիները, ստատս-դամները, ֆրեյլինները և օտար պալատական կանայք։ Նոցա Մեծութիւնները ժամանելով Գրանովիտեան պալատը, բարեհաճեցին բաղմել գահերի վրա ամպհովանու տակ։ Ճաշը պատրաստված էր երեք հոգու համար։ Ցուած նշանով, ծայրագոյն մարշալը, ատաղ-հօֆմարշալը և արարողապետները դուրս գնացին կերակուրներ բերելու. կերակուրները Գրանովիտեան պալատը ներս բերին պաշտօնավարող շտաբ-օֆիցէրները Մոսկվայի նահանգի ազնուականներից, յառաջընթաց ուղեկցելով ծայրագոյն մարշալին և արարողապետներին, որոնց կողքից գնում էին կավալերդարդների գնդի օֆիցէրները։ Կերակուրները սեղանի վրա դնում էին ատաղ-հօֆմարշալը և հօֆմարշալը։ Նորին Մեծութիւնը թագը, գայիսօնը և գունդը յանձնեց պաշտօնեաներին։ Միտրոպոլիտ Սերգի օրհնեց սեղանը։ Թագաւորի սեղանին ծառայում էր Մոսկվայի նահանգական ազնուականութեան պարագլուխ իշխան Տրուբէցկոյ, Կայսրուհի Մարիա Ֆէոդորովնայի սեղանին ծառայում էր կոմս Մուսին-Պուշկին, Կայսրուհի Ալէքսանդրա Ֆէոդորովնայի—Կորնիլով։ Ճաշի ժամանակ, փողերի, թմբուկների ձայնակցութեամբ ու թնդանօթաձգութեամբ, օբէր-շէնկը չորս կենաց առաջարկեց՝ Թագաւորի, Թագուհիների, Ցէսարէվիչի և ամբողջ Թագաւորական տան, հոգևորական անձանց և բոլոր հաւատարիմ հպատակների կենացը։ Նոցա Մեծութիւնները, ճաշը վերջացնելուց յետոյ, դիմեցին դէպի Անդրէեան դահլիճը։ Հէնց որ մտնեց, Նոցա Մեծութիւնները դուրս եկան Կրէմլի պալատի պատշգամբը, կայսերական ընտանիքի անձանց հետ։ Կայսրուհի Ալէքսանդրա Ֆէոդորովնային մատուցվեց մի ծաղկափունջ և հէնց որ Նա բարեհաճեց ընդունել փունջը, ահա նա լուսաւորվեց էլէկտրական բազմաթիւ փոքրիկ լամպներով. ծաղկափունջից տարված էլէկտրական անցքերի միջոցով նոյն վայրկենին լուսաւորվեցին Կրէմլի աշտարակները և ամբողջ Կրէմլը։ Զը տեսված տեսարան էր ներկայացնում լուսաւորված Մոսկվան երէկ երեկոյեան, խաղաղ, պայծառ եղանակին։ Բոլոր փողոցները լցված էին ժողովրդով։ Կարգը օրինակելի էր։

ՄՈՍԿՎԱ, մայիսի 15-ին։ Այսօր առաւօտեան $11^1/_2$ ժամին, Կրէմլի պալատում, Անդրէեան Գահական դահլիճում, Թագաւոր Կայսրը և Թագուհի Կայսրուհին բարեհաճեցին շնորհաւորութիւններ ընդունել սրբազան սինոդի և բարձր հոգևորականութեան անդամներից, օտար դաւանութեան պատկանող քրիստոնեայ հոգևորականներից, Պետական խորհրդից, մինիստրներից, գլխաւոր կառավարիչներից, կառավարիչ Սենատից, ստատս-սեկրետարներից, պատուաւոր խնամակալներից, նահանգական ազնուականութեան պարագլուխներից, նահանգների ազնուականութիւնների ներկայացուցիչներից, ուր ազնուականութեան պարագլուխներ չը կան, Մոսկվայի նահանգի գաւառական ազնուականութեան պարագլուխներից, նահանգական զէմստվօների նախագահներից, Մոսկվայի նահանգի գաւառական զէմստվօների վարչութիւնների նախագահներից, քաղաքագլուխներից, Ֆինլանդիայի Մեծ իշխանութեան պատգամաւորներից, բորսային կոմիտեների և առևտրի ու մանուֆակտուրայի կոմիտեի ներկայացուցիչներից։ Թագաւոր Կայսրը, եգերեան գնդի համազգեստով, ձախ կողմը ունենալով Թագուհի Կայսրուհուն, որը հագած էր մի չքեղ սպիտակ զգեստ, թագը գլխին և ս. Անդրէեան ժապաւէնը ուսին, բարեհաճեց կանգնել գահի մօտ և շնորհաւորութիւններ ընդունել անձինքներից և պատգամաւորութիւններից, որոնք միմեանց ետևից մօտենում էին շնորհաւորութիւններով։ Ընդունելութեան ժամանակ ներկայ էին՝ Մեծ իշխանները, Մեծ իշխանուհիները և Մոսկվայում գտնվող թագաւորները։ Ընդունելութիւնը հանդիսաւոր էր։ Թագաւոր Կայսրը ողորմած կերպով բարեհաճեց շնորհակալութիւն յայտնել ներկայացուցիչներին։ Թագուհի Կայսրուհու ձեռքը համբուրում էին։ Ազնուականութեան, զէմստվօների և քաղաքների բոլոր պատգամաւորութիւնները աղ ու հաց ունէին չքեղ սկուտեղների վրա։ Միմեանց ետևից պատգամաւորութիւնները անցան Թագաւորի առաջ՝ թւով 1200 հոգուց աւելի։ Դա ամբողջ ռուսաց երկրի ակնյայտնի և պարզ արտայայտութիւն էր սիրոյ, վստահութեան և բարեացակամութեան դէպի իր Թագաւորը։ Յերեկվայ մէկ ժամին վերջացաւ պատգամաւորութիւնների ընդունելութիւնը։ Երեկոյեան 7 ժամին նշանակված է ճաշ Գրանովիտեան պալատում առաջին երկու կարգերի պաշտօնեաների համար։

Պետերբուրգի միտրոպոլիտ Պալլադի ճառ խօսեց Թագաւոր Կայսրի առջև Ուսպենսկի տաճարում։

Մոսկվայի միտրոպոլիտ Սերգի ճառ խօսեց Թագաւոր Կայսրի առջև Ուսպենսկի տաճար մտնելուց առաջ։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 15 մայիսի։ Բարձրագոյն պարգևներ քաղաքացիական վարչութեան պաշտօնեաներին։ Բարձրագոյն հրովարտակներ, ժողովրդական լուսաւորութեան մինիստր կոմս Դէլեանովին, մնտեսութեան դէպարտամէնտի նախագահ Սալսկիին, քաղաքացիական գործերի դէպարտամէնտի նախագահ Սոսեանովսկուն, օրէնքների դէպարտամէնտի նախագահ Օատրովսկուն, պետական խորհրդի անդամ կոմս Պալէնին՝ ս. Անդրէյի շքանշանով։ Բարձրագոյն հրովարտակներ ս. Վլադիմիրի I աստիճանի շքանշանի հետ միասին՝ Ֆօրէդօնսցէվին և Դուրնովոին։ Ֆինանսների մինիստր Վիտէին շնորհված է ստատս-սեկրետարի կոչում։ Վլադիմիրի I աստիճանի շքանշաններ ստացան՝ սենատոր Սոլոմոն, ստատս-սեկրետարներ Ֆրիչ, Պոլովցէվ, Մանսուրով, Պետական խորհրդի անդամներ՝ Գոլտգոէր, Բիչկով, Մարկուս, պատուաւոր խնամակալ Մարտինով, սենատոր իշխան Վոլկոնսկի։ Ս. Ալէքսանդր Նէվսկիի շքանշանը՝ ադամանդներով, ստացան՝ Վէչնեակով, Կէդրով, Խիլկով։ Բարձրագոյն ուկաղներով պետական խորհրդի անդամներ են նշանակված՝ Օլդենբուրգեան Ալէքսանդր պրինցը, գեներալ Սուրլեր, ստատս-սեկրետար Բէննէնկամպֆ, գեներալ կոմս Շուվալով, ստատս-սեկրետար Սելիֆոնտով, իշխան Վոլկոնսկի, հօֆմէյստեր կոմս Բոբրինսկի, սենատոր բարոն Վէլիո, ծովապետ Զիխաչէվ, սենատոր Բոզին, փոխ-ծովապետ Կրէմէր, գաղտնի խորհրդական Վերխովսկի։ Գաղտնի խորհրդականից իսկական գաղտնի խորհրդականի աստիճան են ստանում՝ ներքին գործերի մինիստր Գորեմիկին և երկրագործութեան մինիստր Երմօլով։ Պետական քարտուղար Պլեվէին, արդարադատութեան մինիստր Մուրավիեվին և ֆինանսների մինիստր Վիտէին շնորհված է ստատս-սեկրետարի աստիճան։ Դեպարտամենտի դիրեկտոր Անիչկով նշանակված է ժողովրդական լուսաւորութեան մինիստրի օգնական։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 15 մայիսի։ Մայիսի 14-ին հրաչալի տաք եղանակ է։ Քաղաքը թաղված է զարդարանքների և դրօշակների մէջ. տրամադրութիւնը ուրախ է։ Երեկոյեան չը տեսնված չքեղութեամբ և փայլով հրաւառութիւն կար։

ԲԵՐԼԻՆ, 15 մայիսի։ Մայիսի 14-ին, մինչև զօրահանդէսը, այստեղի դեսպանական եկեղեցում մաղթանք կատարվեց։ Ներկայ էին ռուսաց դեսպանութեան անդամները, պալատական անձինք, գեներալները և ռուսաց կօլօնիան։ Կէսօրին, Լուստգարտէնում, թագադրութեան առիթով, տեղի ունեցաւ գվարդիայի գնդերի զօրահանդէսը։ Զօրահանդիսին ներկայ էին ռուսաց դեսպանութեան անդամները։ Կայսրը՝ Կայսր Ալէքսանդրի անուան գրէնադէրեան գնդի համազգեստ ունէր՝ Անդրէեվեան ժապաւէնով։ Զօրահանդէսում ասած ճառից յետոյ, Վիլհելմ կայսրը «hoch» կանչեց ի պատիւ ռուսաց Կայսերական Զոյգի, որից յետոյ երաժշտութիւնը կատարեց ռուսաց ազգային օրհներգը։ Նախաճաշի ժամանակ թագաւորական ամրոցում կայսրը ճառ արտասանեց ի պատիւ ռուսաց Կայսերական Զոյգի։ Կայսրը չեչտեց, որ հէնց ներկայ բոլշեւիկ Ռուսաստանի Կայսրը և Կայսրուհին զրկի իրանց գլխին պսակը և օծումն ընդունեցին, և Ռուսաստանի ժողովուրդների ցնծութիւններին միանում են ուրիշ ժողովուրդների ցնծութիւնները, որոնք յատուկ պատգամաւորութիւններ են ուղարկել Մոսկվա, որոնց թւում գերմանական ժողովրդի պատգամաւորութիւնը վերջին տեղը չէ բռնում։ Նորին Մեծութիւնը սրտաբուղխ բարեմաղթութիւններ անելով ռուսաց Կայսերական Զոյգին, վերջացրեց իր ճառը երբեակ «ուրայով», որը ընդունվեց ոգևորութեամբ բոլոր ներկայ եղողներից։

ԼՈՆԴՈՆ, 15 մայիսի։ «Times» լրագրի մայիսի 13-ից ստացած տեղեկութիւնների համեմատ, երէկվան օրից կանէյան կատարեալ անիշխանական դրութեան մէջ է գտնվում. թիւրքաց զինորները սպանում են և կողոպտում քրիստոնեաներին. սպանվածների թւում գտնվում են յունաց և ռուսաց հիւպատոսութիւնների կամները։ Բոլոր հիւպատոսները հեռագրով դիմեցին իրանց կառավարութիւններին՝ խնդրելով ուղարկել պատերազմական նաւեր։ Անգլիական նաւատորմը Մալտայից գնաց դէպի Կրիտէ կղզին։

ՊԷԿԻՆ, 15 մայիսի։ Հիւսիս-արևմտեան Զինաստանում կրկին ապստամբվեցին մահմեդականները։ Ապստամբները գրաւեցին Կիխա-Կուանդ քաղաքը և նրանք յարձակվում են արևմտեան ուղղութեամբ։

ՄՈՍԿՎԱ, 16 մայիսի։ Մոսկվայի ազնուականութեան պատգամաւորութիւն ընդունելու ժամանակ, Թագաւոր Կայսրը, նահանգական պարագլուխ իշխան Տրուբէցկոյի մատուցած ողջոյնին, բարեհաճեց ասել. «ինձ առանձնապէս հաճելի է Մոսկվայի ազնուականութեան աղ ու հացն ընդունելը։ Շնորհակալ եմ ձեզանից։» Մոսկվայից Թագաւոր Կայսրին աղ ու հաց մատուցանելու ժամանակ, Մոսկվայի քաղաքագլուխն ասեց. «Մեծ Թագաւոր. Մեծ Թագուհի. Ընդունեցէք Ձեր Մոսկվայի ամենաանկեղծ շնորհաւորութիւնը։ Մոսկվան ի սրտէ սիրում է Ձեզ և անկեղծ կերպով աղօթում է Աստուծուն Ձեզ համար»։ Թագաւոր Կայսրը ողորմած կերպով ասեց. «Շնորհակալ եմ ձեզանից։»

Մայիսի 15-ին, երեկոյեան $7^1/_2$ ժամին, Գրանովիտեան պալատում, ներկայութեամբ Թագաւոր Կայսրի, Թագուհի Կայսրուհու, Թագաւորական տան անդամների և օտար պրինցների ու պրինցուհիների՝ տեղի ունեցաւ ճաշ բարձր հոգևորականութեան և առաջին երկու կարգի պաշտօնեաների համար։ Հրաւիրվածներն էին 286 անձինք։ Բարձրագոյն սեղանի շուրջը նստած էին բարձրագոյն անձինք և հոգևորականութիւնը։ Թագաւոր Կայսրի դիմաց նստած էր պալատի մինիստր կոմս Վորոնցով-Դաշկով, աջ կողմը նստած էր միտրոպոլիտ Պալլադի, ձախ կողմը միտրոպոլիտ Սերգի։ $8^1/_2$ ժամին ճաշը վերջացաւ։ 9 ժամին Կրէմլը կրկին լուսաւորվեց, նրա հետ և ամբողջ Մոսկվան։

Մայիսի 15-ին Նոցա Մեծութիւններին ներկայացաւ պապի դեսպան արքեպիսկոպոս Ալիարդի իր սվիտայով։

Մայիսի 16-ին Նոցա Մեծութիւնները երկրորդ անգամ ընդունեցին բուխարական էմիրին և Խիվայի խանին, որոնք եկել էին շնորհակալութիւն յայտնելու Թագաւոր Կայսրին՝ իրանց տրված շնորհների համար, այն է Խիվայի խանին շնորհված է նորին բարձրութիւն տիտղոսը և Նորին Մեծութեան Անուան շիֆրը, իսկ Խիվայի խանին պայծառափայլութիւն տիտղոսը և օրէնբուրգեան կազակների զօրքի գեներալ-լեյտէնանտի աստիճան։ Էմիրը և խանը խօսում էին թարգմաններով։

Մայիսի 16-ին Կրէմլի պալատում շնորհաւորութիւններ մատուցին Նոցա Մեծութիւններին օտար դեսպանները, դիպլոմատիական կորպուսի անդամները, գեներալ-ադիւտանտները, Նորին Մեծութեան սվիտայի գեներալ-մայորները և ուրիշները։ Բոլոր անձինք առաւօտեան $10^1/_2$ ժամին հաւաքվեցին Գէօրգեան դահլիճը. վոլոստների ատամանները և գիւղական ազգաբնակութեան ներկայացուցիչները — Վլադիմիրեան դահլիճում և Բօեարսկայա հրապարակի վրա։ Նոցա Մեծութիւնները, ներքին սենեակներից դուրս գալուց յետոյ, կանգնեցին գահական դահլիճում դռնի մօտ։ Արարողապետները հերթով մտցնում էին հաւաքվածներին։ Պատգամաւորութիւնները ասիական ժողովուրդների կող-

մից, վոլոսների տանուտէրերը, կազակների զօրքերի և գիւղական աղգաբնակութեան ներկայացուցիչները շնորհաւորութիւններ մատուցանելով Նոցա Մեծութիւններին, աղ ու հաց և սուրբ պատկերներ էին մատուցանում նրանց։

ԲԱԳՈՒ, 16 մայիսի։ Մայիսի 14-ը հանդիսաւոր կերպով ծնվեց. քաղաքը զարդարված էր դրօշակներով. հիւրասիրված են զօրքերը, ժողովուրդը, որոնց բաժանվում էին թագաւորի և թագուհու պատկերները. երեկոյեան լուսաւորութիւն, հրախաղ։

Կ. ՊՕԼԻՍ, 16 մայիսի։ Կրիտէ կղզուց ստացված տեղեկութիւնները երկրից փախած մահմեդականներին են վերագրում փողոցային կռիւների մեղը։ Հիւպատոսները, որոնք դժուարութեամբ են պահպանում իրանց հայրենակիցների կեանքն ու կայքը, կղզում գործերի դրութիւնը համարում են վերին աստիճանի կրիտիքական։ Այլ ևս անհնար է պահպանել օտարերկրայիներին առանց պետութիւնների պատերազմական նաւերի օգնութեան։

Թագադրութեան առիթով սուլթանը շնորհաւորական հեռագիր ուղարկեց Թագաւորին։

ՊԱՐԻԶ, 16 մայիսի։ Ֆօր ստորագրեց այն դեկրետը, որով մարկիզ Նոալի նշանակվում է Բերլինի ֆրանսիական դեսպան։

ԲԱԹՈՒՄ, 16 մայիսի։ Քաղաքը ընկղմված է դափնիների և դրօշակների մէջ. չինված են բազմաթիւ յաղթական կամարներ. փողոցները լի են ժողովրդով. երաժշտական խմբերը նուագում են հիմնը, որը ընդունվում է բուռն «ուրայով»։ Քաղաքի ամբողջ աղգաբնակութիւնը, առանց խտրութեան աղգերի, արտայայտում է անկեղծ ուրախութիւն։ Ոգևորութիւնը անսովոր է։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ԲԱԼԱՆԹԱՐ

Հրատարակիչ՝ ԱՆԴՐԷԱՍ ԱՐԾՐՈՒՆԻ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱԶՆՈՒԱԿԱՆՆԵՐԻ ԹԱՏՐՕՆ

Կիրակի, մայիսի 19-ին

ՕՐ. ՄԱՐԻ-ՀՐԱՆՈՅՇԸ

Մասնակցութեամբ օր. Վարդիթերի և դերասանական խմբի անդամների՝ կը ներկայացնէ իր երկրորդ դէբիւտի համար առաջին անգամ

ՍԻԻԶԱՆ ԵՒ ԻՄԲԵՐԸ

Դրամա 5 արար. և առաջաբանով, թարգմ. Մնակեանի։

Տեղերի գինը սովորական է։

Տօմսակները վաճառվում են թատրօնի կասսայում։

Սկիզբն է 8 ժամին։

(№ 56) 2—2

ԱՐԴԷՆ ԹԱՐԳՄԱՆՎԵԼ ԵՄ՝

1) «СОВРЕМЕННОЕ ПОЛОЖЕНІЕ ЗАМУЖНОЙ ЖЕНЩИНЫ».—П. Лебединскаго.

2) «РАЗОРЕННОЕ ГНѢЗДО».—А. Сливицкаго.

2—2 Ռ. Յովհաննէսեան

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

Բ. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆԻ

(Կուկիա, Վլօրենցովի արձանի հանդէպ)

Հիւանդներին ընդունում են ամեն օր, բացի կիրակի օրերից։

ԱՌԱՒՕՏՆԵՐԸ՝

Բ. Ա. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան, սիֆիլիս և վեներական հիւանդութիւնների։

Դ. Գ. ՁԻԿՈՎԱՆԻ—9—10 ժ. աչքի, ներքին և նեարդային հ.

Կին-բժիշկ ԴՈՒՆԱՅԵՎԱ-ԲՈՒԴԵՆԿՕ—10—11 ժ. կանանց և երեխ. հ.

Ի. Ֆ. ՊՐՕՏԱՍԵՎԻՉ—12—1 ժ. ականջի, կոկորդի, քթի և կրծքի հ. երկուշաբթի, չորեքշաբթի և ուրբաթ։

Ա. Մ. ՓՈՒՂԻՆԵԱՆ—12—1 ժ. ներքին, երեխայոց և նեարդային հ. երեքշաբթի, հինգշաբթի և շաբաթ։

Ա. Պ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ—1—1½ ժ. ներքին և երեխայոց հ.

ԵՐԵԿՈՆԵՐԸ՝

ՊՐՕՏԱՍԵՎԻՉ—5—6 ժ. երեք. հինգշ. և շաբաթ։

Ա. Մ. ՓՈՒՂԻՆԵԱՆ—5—6 ժ. երկուշաբթի չորեքշաբթի և ուրբաթ։

Ա. Գ. ԳՈՒՐԿՕ—6—7 ժ. Սիֆիլիսի, մէզի և սեռական օրգանների հ. ներքին և մորթի հ.

Ա. Գ. ԳՈՒՐԿՕ քիմիական և խոշորացուցական հետազօտութիւններ է անում մէզի, խլխի, արեան, կաթի և այլն։

Վճար 50 կ.։ Համախորհրդի (կոնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։

Հիւանդանոցի վերատեսուչ՝

բժշկապետ ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ

ԼՈՅՍ ՏԵՍԱՆ

ՐԱՖՖԻ

	Ր.	Կ.
„ԽԱՉԱԳՈՂԻ ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆԸ“ I II III և IV մասերը մի գրքում ամփոփված. Բ. տիպ.	2	50
„ՁԱՀՐՈՒՄԱՐ“	2	„
„ԽԱՄՍԱՅԻ ՄԷԼԻԲՈՒԹԻՒՆՆԵՐ“ Բ. տիպ., ...	2	„
„ՏԱՃԿԱՀԱՅՔ“	„	40

Դիմել՝ Тифлисъ, Аннѣ Раффи.

(№ 57) 1—4

ԱՄԵՆԱՅԱՅՏՆԻ ԴՈՐԾԱՐԱՆՆԵՐԻ



ՐՕՅԵԱԼՆԵՐ

ԴԱՇՆԱՄՈՒՐՆԵՐ

ՖԻՍ-ՀԱՐՄՕՆԻՈՒՄՆԵՐ, ՁՈՒԹԱԿՆԵՐ։ ԿԻԹԱՌՆԵՐ, ՖԼԷՅՏԵՐ, ԿԼԱՐՆԵՏՆԵՐ, ՁԱՅՆԱԽԱՁԵՐ, ԼԱՐԵՐ ԵՒ ԱՅԼՆ, ԵՒ ԱՅԼՆ։

Բոլոր տեսակ գործիքների համար գինը կարելի է վճարել մաս-մաս։

ՆՈՐ-ՊՐԷՅՍԿՈՒՐԱՆՏՆ

ուղարկվում է ձրի։

ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐԻ ԵՒ ՁԱՅՆԱԽԱՁԵՐԻ ԿՈՎԿԱՍԵԱՆ-ԿԵՆՏՐՕՆԱԿԱՆ

ԴԷՊՕ

Բ. Մ. ՄԻՐԻՄԱՆԵԱՆԻ

Մատակարար կայսերական երաժշտական ընկերութեան

Музыкальное депо Б. М. Мириманіана, ТИФЛИСЪ,

Дворцовая ул., д. Т. Д. З. Банка.

(№ 35) 15—20



ՕԺԻՏԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆ

ԱՂՋԿԵՐԱՆՑ ՀԱՄԱՐ

ՀԻՄՆԱԿԱՆ ԵՒ ՊԱՀԵՍՏԻ ԴՐԱՄԱԳԼՈՒԽՆ է 23,000,000 *բուբլի։*
Ընկերութեան տոկոսաբեր թղթերը պահվում են պետական բանկում։

Ծնողներին, խնամատարներին և առհասարակ այն անձանց, որոնք ցանկանում են ապահովացնել աղջկանց ապագան, „ՐՕՍՍԻԱ“ ընկերութիւնը առաջարկում է ՕԺԻՏԻ (*բաժինք*) ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆԸ։

Օրինակ, եթէ ցանկանում են երկու ամեայ աղջկայ համար ապահովացնել 5000 ՐՈՒԲԼԻ ՕԺԻՏ, *այնպէս որ,* 18 ՏԱՐԵԿԱՆ ԺԱՄԱՆԱԿԻՆ *ստանան այդ գումարը, (այսինքն 16 տարուց յետոյ), այն ժամանակ այդ տեսակ ապահովագրութեան համար ապահովագրողը „Ռոսսիա“ ընկերութեանը պիտի վճարի ամեն 3 ամսից յետոյ 52 բուբլի։*

Սոյնանման ապահովագրութիւններ կարելի է կայացնել նաև այն պայմանով, որ ապահովագրողին անմիջապէս վերադարձվին բոլոր իր վճարած տուրքերը (պրէմիաները,) եթէ միայն ապահովագրված երեխան վախճանվի պայմանաւորեալ ժամանակից առաջ։

1895 թուի յունվարի 1-ին „ՐՕՍՍԻԱ“ ընկերութեան մէջ ապահովագրված էին 31,701 *անձինք* 83,708,760 *բուբլի դրամագլխով։*

Տղայ երեխաների համար ևս կարելի է ապահովացնել դրամագլուխ նոյն կերպով, ինչպէս աղջկանց, և այդ դրամագլուխը կը ստացվի իբրև թոշակ (պէնսիա) ԿՐԹՈՒԹԻՒՆԸ ՇԱՐՈՒՆԱԿԵԼՈՒ *համար, եթէ միայն ապահովագրած երեխան կապրի մինչ պայմանաւորեալ ժամանակամիջոցը։*

Ապահովագրութեան մասին յայտարարութիւններն ընդունվում են և ամեն տեսակ տեղեկութիւններ հաղորդվում են վարչութեանը Ս. Պետերբուրգում (Большая Морская, *սեփական տուն,* № 37), *Կովկասեան շրջանի համար ընկերութեան վարչութեան մէջ, որ գտնվում է՝*

ԹԻՖԼԻՍՈՒՄ, *Սերգիեվսկայա փ. տ.* № 6. (*երկրորդ յարկում*) *և բոլոր գործակալութիւններում կայսրութեան բոլոր քաղաքներում։*

(№ 71) (2.) 23—52



ԷՕԺԷՆԻԱՑԻ ՊԱՍՏԱ

երեսի մորթը կակղեցնելու համար պօմադ. ոչնչացնում է շուտով երեսի վրա եղած կարմիր բիծերը և մունները. այս միջոցը առաջ է բերում նաև երեսի թարմութիւն և գեղեցկութիւն։ Գինը 1 ր. 60 կ.

Elixir Mélange

Մաղերը աճեցնելու և գլխի թեփը ոչնչացնելու հեղուկ։ Գինը 2 ր.

ԷՕԺԷՆԻ ՊՈՒԴՐԱ

սպիտակ, վարդագոյն և բաչել (թուխ դէմք ունեցողների համար) նա ամուր կերպով պահպանվում է մորթու վրա և բոլորովին անկատելի է աչքի համար, մորթուն տալիս է նոյնպէս խիստ կակղութիւն, առաձգութիւն և քնքշութիւն։ Գինը և 1 ր. 20 կ. 1 ր. 50 կ.

ԷՕԺԷՆԻ ԿԱՐՄԻՐ ՆԵՐԿ

հեղուկ վիճակի մէջ այտերին և ականջներին տալիս է բոլորովին բնական, վարդային գոյն որ ոչ ցերեկվայ, ոչ ելէքտրական լոյսից չէ փչանում։ Գինը 1 ր. 50 կ.

ՄԻՐՏԱՑԻՆ ԲԱԼԶԱՄ

(պուդրա հեղուկ վիճակի մէջ), տալիս է երեսին, վզին, ձեռքերին քնքոյշ կակղութիւն և մարմարեանման մաքրութիւն։ Նա ոչնչացնում է արևհարքը, մունները և մորթու վրա եղած ամեն մի անհարթութիւն և տգեղութիւն։ Գինը 1 ր. 75 կ.

ՔԻՆԱ-ԳԼԻՑԵՐԻՆԱՑԻՆ

գլխի պօմադ Պերուանական բալզամով եփած՝ մաղերը պնդացնելու, խտացնելու և աճեցնելու համար։ Գինը 2 ր.

ԽԽՈՒՆԶԱՑԻՆ ՊՕՄԱԴ

նրա գործածութիւնից յետոյ ձեռները ստանում են զարմանալի սպիտակութիւն և ճկունութիւն։ Գինը 1 ր. 30 կ.

ՈՒՆԳԱՐԱԿԱՆ ԷՍՍԷՆՑԻԱ

բեղերի համար (Րիս-Գուտման) տալիս է նրանց անմիջապէս հարկաւոր ձևը, ամրացնում է նրանց և նպաստում է նրանց արագ աճման։ Գինը 75 կ.

ՆԵՐԿԵՐ ՄԱԶԵՐԻ ՀԱՄԱՐ

(Րիս-Գուտման), *սև, չգանակագոյն և խարտեաչ։ Այդ ներկով ներկված մազերը պահպանում են իրանց գոյնը 6 շաբաթվայ ընթացքում։* Գինը 3 ր.

Ծախվում է բոլոր դեղարարական և կօսմէտիական խանութներում։ Գլխաւոր պահեստը՝ *Բարձրագոյն հաստատված՝ դեղարարական ապրանքների կովկասեան ընկերութեան մէջ Թիֆլիս և Բաքու։* (№ 26) 10—50

„ՄՇԱԿԻ“ ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ

Վաճառվում են հետևեալ հայերէն գրքերը	Գինը
1) ԻՎ ԷԼԻՆԱ, *Գրիգոր Արծրունու*	50 կոպ
2) ԹԻՒՐՔԱՑ ՀԱՅԵՐԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԴՐՈՒԹԻՒՆ, *Գ. Արծրունու*	20 „
3) ՄՏՔԻ ՄՇԱԿԸ, *Խ. Մալումեանի.*	50 „
4) ՍԱՍՈՒՆ, *Ա. Քալանթարի.*	20 „

Дозволено цензурою, Тифлисъ, 17 Мая 1896 г. Типографія Канцел. Главнонач. Гражданск. частью на Кавказѣ, Лорисъ-Меликовская ул., д. кав.